ՀԱՄԱՐԴԿՈՈՊԽՈՐՀՈՒՐԴ
ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍԵԿՏՈՐ

ԿՈՇԿԵՂԵՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԵԼԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ

(ՏԵԽՄԻՆԻՄՈՒՄԻ)

# ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Թարգմանություն ռուսերենից

1939 Թ. ԵՐԵՎԱՆ

Հ Ա Մ Ա Ր Դ Կ Ո Ո Պ Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

31 JAN 2018

**ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍԵԿՏՈՐ**

---

ԿՈՇԿԵՂԵՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԵԼԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ

(ՏԵԽՄԻՆԻՄՈՒՄԻ)

# ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Թարգմանություն ռուսերենից

---

*1939 Թ.* *ԵՐԵՎԱՆ*

Ռուսերենից թարգմանությունը քննարկված է և հավանության է տրված ու հաստատված Կոշիկի-մաշտակի միության 1939 թ. ապրիլի 20-ին № 142 հրամանով հրավիրված մասնագիտական հանձնաժողովի կողմից, նախագահությամբ միության կազմբաժվար ընկ. Պ. Սեդրակյանի, անդամակցությամբ «Սոց-արշավ», «Ցերկոս» և «Բուքանիա» արտելների նախագահներ ընկ. ընկ. Պ. Հովհաննիսյանի, Հ. Կալպակչյանի և Գ. Գզմալյանի:

Ռուսերենից թարգմանեց՝ Բ. ՄԱԼԵՆՑ

Խմբագրիչ՝ Արտ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՄԱՐ
II-28402գր

*Ծրագիրը հաստատված է Համարդ-կոոպխորհրդի կադրերի սեկտորի կողմից մայիսի 14-ին, 1938 թ.*

# ԿՈՇԿԵՂԵՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿՈՇԿԱԿԱՐՆԵՐԻ ՏԵԽՄԻՆԻՄՈՒՄԻ ԾՐԱԳԻՐ

(Անհատական ձեռքի աշխատանք)

## ԳՈՐԾԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ՅԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

### Ա) ԿՈՇԿԵՂԵՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿՈՇԿԱԿԱՐԸ ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱ

1. Կոշկեղենի հիմնական տեսակների կառուցվածքը և նրանց կարելու մեթոդների տարբերությունը:

2. Կոշկեղենի տակացույի և յերեսացույի ամեն մի առանձին մասի (ելեմենտի) նշանակումը, ինչպիսի հատկություն պետք է նրանք ունենան:

3. Տարբեր մեթոդներով, ձեռքի աշխատանքի միջոցով ամրացվող կոշկեղենի վերանորոգման տեխնոլոգիական պրոցեսը:

4. Ինչպիսի հատկություն պետք է ունենան կոշկեղենի վերանորոգման գործում գործադրվող հիմնական և օժանդակ նյութերը (ֆուրնիտուրան):

5. Կաշվի և կաշի փոխարինող նյութերի հատկությունը, յելնելով կոշկեղենի տեսակից ու ամրացման մեթոդից, կոշկեղենի առանձին մասերի վրա այդ նյութերը գործադրելու հնարավորությունը:

6. Վերանորոգման վորակի և կոշկեղենի սկզբնական ձևը (ֆասոնը, չափը և այլն պահպանելու համար կաղապարները ճիշտ համապատասխանեցնելու նշանակությունը և ինչպիսի հատկություն պետք է ունենան կոշկեղենի վերանորոգման արհեստանոցում կաղա-

պարները), կաղապարների տեսակները, մաշվածության (ամորտիզացիայի) կարգը և այլն:

7. Կոշկակարական գործիքներով աշխատելու ձևերը և նրանց խնամելու կանոնները:

8. Կոշկեղենի բարձրորակ վերանորոգման տեխնիկական պայմանները:

9. Կոշկեղենի վերանորոգման գործում խոտանի (բրակ) տեսակները, այդպիսին հեռացնելը և կանխելու միջոցառումները:

10. Խոտանը վորոշելու սահմանված կարգը և ինչպիսի վորակ պետք է ունենա 1-ին տեսակի վերանորոգումը:

11. Աշխատանքի ստախանովյան մեթոդները և լավագույն վերանորոգող կոշկակար—ստախանովականների նվաճումները:

12. Կոշկեղենի հիմնական տեսակների վերանորոգման արտադրական նորմաները:

13. Տնտհաշվարկի իմաստը և նշանակությունը կոշկեղենի վերանորոգման արհեստանոցներում:

14. Հիմնական և օժանդակ նյութերի (ֆուրնիտուրայի) ծախսման նորմաները:

15. Աշխատավարձի հաշվարկի և վճարման կարգը:

16. Սանիտարական առողջաբանություն (գիգիենա), աշխատանքի պաշտպանություն և տեխնիկայի անվտանգության անհրաժեշտ միջոցառումները:

## Բ) ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿՈՇԿԱԿԱՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ

1. Կոշկեղենի վերանորոգումն ավելի էֆֆեկտավոր լինելու համար, վորոշել մաշված կոշկեղենի վերանորոգման անհրաժեշտության աստիճանը:

2. Վորոշել վերանորոգման յենթակա կոշկեղենի առանձին մասերի պիտանիության աստիճանը, հին ռանտի (կամ ռելոդկայի), առելկայի, զադնիկի, կրունկների և այլն:

3. Համարեցնել ամեն մի առանձին դեպքում, ավելի քան նպատակահարմար նյութեր և օժանդակ նյութեր (ֆուրնիտուրա), միաժամանակ օգտագործելով նաև ուտիլը և մնացորդները (օտխոդները):

4. Ինքնուրույն վերանորոգել (ձեռքի աշխատանքի միջոցով) զանազան տեսակի կաշվե և մասամբ էլ գեղատեսք (եդյանչնի) կոշկեղեն:

5. Ինքնուրույն վերանորոգել թաղիքյա և ռեզինե կոշկեղեն:



6. Սահմանված նորմաները գերակատարելու նպատակով ճիշտ դասավորել իր աշխատանքը:

7. Ստախանովյան ձևով կազմակերպել իր աշխատանքի տեղը և աշխատել ստախանովյան մեթոդով:

## 2. Կոշկեղենի վերանորոգման վրա աշխատող կոշկակարների դասընթացների ուսման պլանը

| №№ ը/կ | Առարկաների անվանումը | Ուսման ժամերի թիվը ըստ ամիսների | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | |
| 1 | ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը (հիմնական օրենք) . . . . . . . | 10 | 10 | — | — | 20 |
| 2 | Ներածություն (տեխնիկական ուսուցման խնդիրները, ստախանովյան շարժումը և արտկոոպերացիայի կազմ. կառուցվածքը . . . . . | 8 | — | — | — | 8 |
| 3 | Մասնագիտական գործ . . . . . | 5 | 15 | 25 | 25 | 70 |
| | Ընդամենը | 23 | 25 | 25 | 25 | 98 |

## 3. Մասնագիտական գործ

### ա) ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

| №№ ը/կ | Թեմայի բովանդակությունը | Ուսման ժամերի թիվը ըստ ամիսների | | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | | Թեորետիկ ուսուցում | Արտադրական հրահանգավ. | |
| 1 | Ընդհանուր տեսություն կոշկեղենի արտադրության մասին . . . . . . . | 3 | — | 2 |
| 2 | Կոշիկի վերանորոգման գործում գործածվող կիսաֆաբրիկատներ և օժանդակ նյութեր (ֆուրնիտուրա) . . . | 8 | 2 | 10 |
| 3 | Կաղապարներ և գործիքներ . . . . | 3 | 1 | 4 |
| 4 | Կոշկեղենի վերանորոգման տեխնոլոգիական պրոցեսը . . . . . . . . . | 18 | 12 | 30 |
| 5 | Կոշկեղենի վերանորոգման տեխնիկական պայմանները և խոտանի բնորոշումը (բրակյորաժ) . . . . . . . . . | 6 | 2 | 8 |
| 6 | Աշխատանքի տեղի կազմակերպումը, անվտանգության տեխնիկա և աշխապաշտպանություն . . . . . . . . . | 15 | — | 15 |
| | Ընդամենը | 53 | 17 | 70 |

## Բ) ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Թեմա առաջին։** Ընդհանուր տեսություն կոշկեղենի արտադրության մասին։

Ամենաշատ տարածված կոշկեղենի տեսակները—ըստ պաղոտովկայի տեսակի՝ (տիպի) յերկարաճիտ, կրկնակարուրդներ (շտիբլետներ), կիսակոշիկներ, կիսայերկարաճիտ կոշիկներ, տուֆլիներ, դետրի և այլն. ըստ գործադրվող ներքանի ամրացման մեթոդների՝ ռանտով, կարովի, փայտե մեխով, պտուտակով (վինտով) կպցնովի կոշկեղեն։ Կոշկեղենի հատուկ տեսակները՝ սանդալներ, դարձովի կոշկեղեն, սպորտաձև և այլն։ Կոշկեղենի և կաղապարների չափերը ըստ յերկարության և հաստության (լրիվության)։

Կոշկեղենի բաժանումը ըստ սեռի և չափերի (տղամարդու, կանացի, տղայի (մալչիկով), անչափահասի (նեդոմերկա), յերեխայի և փոքր յերեխայի)։

Կոշկեղենը ձեռքով կարելու և մեքենայացված ձևով կարելու յուրահատկությունները։ Կոշկեղենի տակացույի և յերեսացույի առանձին մասերը (ելեմենտները)։ Առանձին մասերի (ելեմենտների) դերը և նշանակությունը։ Տղամարդու և կանացի կոշկեղենի կրունկների տեսակները և ձևերը (ֆասոնը)։ Ռանտով, կարովի, կպցնովի կոշկեղենի կարելու պրոցեսների հետեվողականությունը։ Ամեն մի պրոցեսի նշանակությունը։ Ձևավորված (ֆորմովաննի) և մանոլիտնի (արհեստական) ներբանով կարվող կոշկեղենի յուրահատկությունները։ Կոշկեղենի տակացույի և յերեսացույի առանձին մասերի (ելեմենտների) թերությունները (պառոկները)։

**Թեմա յերկրորդ։** Կոշկեղենի վերանորոգման գործում գործածվող կիսաֆաբրիկատներ և օժանդակ նյութեր (ֆուրնիտուրա)։

Կաշվի ֆիզիկո-մեխանիկական հատկությունը։ Բուսական և քրոմային դաբաղած կաշի։ Կոշկեղենի ներբանի և յերեսի վրա գործադրվող կաշվի տեսակները։ Կարողանալ բնորոշել կաշվի տեսքը և տեսակը։ Կաշվի տեղագրությունը (տապոգրաֆիա) և փափուկ կաշվի ձգման ուղղությունը։ Կոշկեղենի վերանորոգման գործում գործադրվող կաշի փոխարինողներ (զամենիտել)։ Տափակ ռեզին—ֆիզիկո-մեխանիկական հատկությունը, կաշվի նկատմամբ ունեցած առավելությունները և թերությունները։ Պլաստկոժ—պլաստկոժի բաղադրությունը, նրա հատկությունը և



առանձնահատկությունը տափակ ռեզինի և կաշվի նկատմամբ։ Զանազան չափերի պադմյոտկայի և նաբոյկայի վրա գործածվող կաշու, տափակ ռեզինի և պլաստկոժի ծախսելու նորմաները։

Զանազան տեսակի վերանորոգվող կոշկեղենի վրա գործադրվող տափակ ռեզինի և պլաստկոժի հաստությունը։ Կարտոնի զանազան տեսակները, նրանց հատկությունները և գործադրումը վերանորոգման գործում։

Կոշկեղենի այն առանձին մասերը, վորոնց վրա կարելի յե գործադրել կաշի փոխարինողներ, յելնելով տվյալ կոշկեղենի տեսքից ու ամրացման մեթոդից։

Ձևավորված և մանոլիտնի (արհեստական) ներբան—նրանց առավելությունները և թերությունները։ Մանոլիտնի կրունկներ և նրանց գործադրման հնարավորությունը։ Ուտիլի մնացորդների—ոտխոդների գործադրումը կոշկեղենի վերանորոգման գործում։

Օժանդակ նյութեր (ֆուրնիտուրա)—մեխ փայտից և յերկաթալարից, յերկաթյա շպիլկա և տեկս։ Վերանորոգման զանազան պրոցեսներում գործադրվող մեխերի և շպիլկաների լավագույն չափերը. ինչպիսի վորակ պետք է ունենան նրանք։ Զութած թել, նրա մշակումը և վորակը։ Խոզի մազի գործադրումը։ Սոսինձ դեկստրինային, ռեզինի և հյուսնի, նրանց գործադրումը կոշկեղենի վերանորոգման գործում։ Ամեն մի տեսակ սոսինձի յուրահատկությունը, ինչպիսի վորակ պետք է ունենան նրանք։ Կրունկի փայտե կոճղ (բոլվանկա)—նրանց պիտանիությունը վորոշելը։ Ոտդելկայի նյութեր—ապակյա թուղթ, ապակի, մոմ, ներկ, գուտալին, կոշիկի յուղ, կուպր (դեգոտ), լաք, թանաքի փոշի, բլոչկի, կեռ (կրյուչկի) և կոճակներ։ Ամեն մի տեսակ նյութի նշանակությունը, նրա վրա աշխատելու ձևերը. ինչ վորակի պետք է լինեն նրանք։ Հասկացողություն նյութերի և կիսաֆաբրիկատների ստանդարտների մասին։

**Թեմա յերրորդ։** Կաղապարներ և գործիքներ։

Կաղապարների տեսակները—քաշվող (զատյաժնոյ) մետաղյին պլաստինկայով և այլն։ Ամեն տեսակի կաղապարների նշանակումը։ Ամեն մի վերանորոգման արհեստանոցում անհրաժեշտ կաղապարների քանակը և տեսակները։ Ինչպիսի հատկություն պետք է ունենան և ինչ վորակի պետք է լինեն կաղապարները։ Կաղապարների պահպանելու հիմնական կանոնները։

Կոշկեղեն վերանորոգող կոշկակարին անհրաժեշտ կոշկա-

կալական գործիքների հավաքը (նաբոր)։ Ամեն մի գործիքի նշանակումը, ինչպիսի վորակ պետք է ունենան նրանք և նրանցով աշխատելու ձևերը։ Գործիքների կատարելագործված տեսակները—մեքենայացված կոթով դուրգնի բիզ, էլեկտրոջերմիչներ, ոժանդակ նյութերի պտուտաններ (ֆուրնիտուրայի վերտուշկաներ), կարկատան մամլելու ակցան (կլեշչի) և այլն։ Կատարելագործված գործիքների առավելությունները։ Ռեզինով վերանորոգում կատարելու գործիքների առանձնահատկությունները (կլոր բիզ, բիսոր բանալու դանակ)։ Գործիքները գործածելու և խնամելու կանոնները։ Ամեն մի արտելականի պատասխանատվության կարգը, իրեն հանձնված գործիքի համար։ Գործիքի պահպանումը և նրա դասավորումը դազգյահի վրա։ Ամեն մի վերանորոգող կոշկակարի անդադար աշխատանքը ապահովելու համար անհրաժեշտ գործիքների քանակը։ Գործիքների սրումը կազմակերպելը։

**Թեմա չորրորդ։** Կոշկեղենի վերանորոգման տեխնիկական պրոցեսը։

## ԿԱՇՎԵ ԿՈՇԿԵՂԵՆԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ

Կոշկեղենի ամենահաճախ պատահող փչացվածությունը։ Վերանորոգումների կլասիֆիկացիան՝ խոշոր, միջակ և փոքր վերանորոգում։ Վերանորոգման ժամանակ կոշկեղենի ներբանի ամրացնելու մեթոդները։ Կոշկեղենը տափակ ռեզինով ամրացնելու ժամանակ, սոսինձով կպցնելու մեթոդների առավելությունը։ Ամրացնելու համակցական (կոմբինիրովաննի) մեթոդները։ Կոշկեղենի վերանորոգման պրոցեսների հետևողականությունը, կախված նրա վերանորոգման բնույթից և ամրացման մեթոդներից։ Ներբանի և նրա առանձին մասերի մաշվածության և պիտանիության աստիճանը վորոշելը։ Կոշկեղենի վերանորոգման ամենապատասխանատու պրոցեսները։ Ռանտի կամ ոբվոդկայի կիսատելկայի, պրոստելկայի նշանակությունը։ Ոտդելկայի պրոցեսների նշանակությունը։ Փայտից կամ կաշվից բարձր կրունկներ պատրաստելու դեպքում, նրանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ պահանջը։ Վերանորոգումների մեխանիզացիան։ Սոսինձով կպցնելու մեթոդը գործադրելու համար անհրաժեշտ սարքավորումը։ Սոսինձով կպցնելու դեպքում կրակի վտանգությունը։ Կոշկեղենը ժամանակից շուտ մաշվելու պատճառները։ Կոշկեղենի գործածման ժամկետը յերկարացնելու համար փոքր վերանորոգումների նշանակությունը։ Կարովի կամ կպցնովի (աննկատելի), սովորական կամ նասոկի տակ սորոչկայով կարկատան դնելը։ Ներբանի տակ կամ կրունկի վրա ձգելով կարկատան դնելը։ Կոշկեղենի յերես կարելը։

Կաղապար հարմարեցնելը. կաղապարի վրա կիսատելկա քաշելը և կոշկեղենը վրան նստացնելը։ Հին, մաշված կոշկեղենի առանձին մասերը պոկելը և քանդելը։ Կոշկեղենի կես կամ լրիվ յերեսը վրա քաշելը։ Ռանտի կամ ոբվոտկայի նախապատրաստելը ըստ իր հաստության, յերկարության և լայնության։ Նոր ռանտ կարելը կամ հին ռանտ ամրացնելը, նոր ոբվոտկա ամրացնելը (ամբողջովին կամ մի մասի վրա) կամ հին ոբվոտկան ամրացնելը։ Պրատիկա դնելը, նրա ամրացնելը։ Ներբանի նախապատրաստելը։ Կոշկեղենի տակը ռաշպիլով քերելը։ Ռեզինե սոսինձ (կլեյ) քսելը։ Ներբան (պադմյոտկա) դնելը, նախորոք քթի և մեջքի մոտ ամրացնելը, կարելը և գիծ քաշելը։

Ռանտով կարելու դեպքում ռիսս բանալը։ Ներբան ամրացնելը փայտե մեխով, կամ կարելը ռանտ լինելու դեպքում։ Կաշվից նոր կրունկ կամ նաբոյկա պատրաստելը կամ լրացնելը։ Փայտից նոր կրունկ պատրաստելը կամ լրացնելը։ Ոտդելկա ձեռքի աշխատանքի միջոցով—ներբանի (պադմյոտկայի) և նաբոյկայի յեզրը վերջնականապես կտրելը-տաշելը, ռաշպիլով պադմյոտկայի և նաբոյկայի ուրեզը քերելը։ Ուրեզը ապակով, ապակեթղթով մաքրելը և ներկելը։ Մոմապատելը, ֆումելե ուրեզ դնելը և կրունկներն ու մեջքը ոմբուսով թոքմաչելը (հարթուկով ոտդելկա անել)։ Մոմը մաքրել, կաղապարից հանել, մեխերը նստացնել։ Սայուզկայի սորոչկա տալը ձեռքով (սովորական ձևով կամ ոլաքաձև)։ Վերանորոգումների տարբեր դեպքերը։ Ռուբչիկ խփելը կամ կարելը, հին կրունկներն ամրացնել կրունկի տակ կոշտ կաշի դնելով։ Նստած զաղնիկ ուղղելը, զաղնիկի կաշե սատառը փոխելը և այլն։ Կոշկեղենը վերջնականապես նորոգելուց հետո նրա ոտդելկան—գուտալինով մաքրելը կամ կոշկեղենի յերեսը ապրետուրայով (գլապոր) ներկելը, ուրեզին, մեջքին և կրունկներին լաք քսելը։ Յալովի (և յուֆտ) կոշկեղենը կոշիկի յուղով մաքրելը կամ կուպր (դեկտ) քսելը։ Տեխնիկական պահանջը և ամեն մի պրոցեսի աշխատանքի յեղանակը—ձևը։

## ԹԱՂԻՔՅԱ ՅԵՎ ՌԵԶԻՆԵ ԿՈՇԿԵՂԵՆԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ

Թաղիքյա կոշկեղենի վերանորոգումը։ Կաղոդկայի վրա նստեցնելը, թաղիքը քերելը-մաքրելը, կարկատան դնելը, կրունկի մասը կաշվից կամ թաղիքից սորոչկայելը։ Նոր թաղիքից

կամ թաղիքյա մնացորդներից (ուտիլից) ներբան կամ նաբոյկա ձևելը։ Ներբանի և նաբոյկայի կողքերը կարելը և կաղապարից հանելը։ Թաղիքյա կոշկեղենի վերանորոգելու գործիք։ Հասարակ կամ դոպպելնի բզով (կամ կեռով) աշխատելը։ Նյութերի և ոժանդակ նյութերի (ֆուրնիտուրայի) գործածման նորմաները։

Ռեզինե կոշկեղենի վերանորոգումը։ Կոշկեղենի նախապատրաստելը վերանորոգման համար։ Վերանորոգվող կոշկեղենի մակերեսը ուղղելը և պլաստիկա դնելը։ Կարկատան, նասոկ և զաղնիկ դնելը։ Առանձին մասեր նախապատրաստելը։ Կոշկեղենի տակն ու մասերը քերելը և ծեծելը։ Ներբան (պաղմյոտկա) և նաբոյկա կարելը, յեզրերը իջեցնելը, ռաշպիլով քերելը և լաք քսելը։ Կոշկեղենի տակը և առանձին մասերին սոսինձ քսելը, մասեր դնելը և ծեծելը։ Ռեզինի կոշկեղեն վերանորոգելու դեպքում գործածվող գործիք։ Նյութերի և սոսինձի գործածման նորմաները։

**Թեմա հինգերորդ** Կոշկեղենի վերանորոգման տեխնիկական պայմանները և խոտանի բնորոշումը (բրակիրաժ)։

Կոշկեղենի վերանորոգման դասավորումը (կլասիֆիկացիան) ըստ վորակի։ Ինչպիսի վորակ պետք ե ունենա 1-ին կարգին դասվող վերանորոգված կոշկեղենը։ Վերանորոգված կոշկեղենի հիմնական թերությունները՝ սայուղկաների կամ կոշկեղենի քթերի (նասոկների) անհամաչափությունը, վատ ուղղած քթերը (նասոկները) կամ զաղնիկները, կրունկների կամ ներբանի ուրեզների մեջ անցքեր թողնելը, սայուղկաների, քթերի (նասոկների), կարկատանների անփույթ ստրոչկա տալը կամ կարելը։ Կոպիտ ռուբչիկ դնելը, ներբանի (պաղմյոտկայի) ու նաբոյկայի մեխերի կամ ներբանի կարերի անհամաչափությունը և իրարից շատ հեռու լինելը։ Ռանտը վատ կարելու հետևանքով ստելկայի և ռանտի մեջ արանք թողնելը, կոշկեղենի ներսում չնստացրած մեխեր կամ անհավասարություններ թողնելը, կարճ կամ անհամաչափ դրած ներբան (պաղմյոտկաներ), կաղապարները լավ չհարմարեցնելու հետևանքով առաջացած կոշկեղենի նախնական տեսքի ու ձևի (ֆասոնի) փոփոխումը, միջանցիկ (սկվաղնոյ) կամ խոր կտրվածքները և կոշկեղենի յերեսի նստվածքները (սսադինա), թելի գույնի անհամապատասխան լինելը, կոշկեղենի ոտդելկայի վատ լինելը և այլն։

2-րդ տեսակին (սորտին) կամ խոտանին (բրակին) դասվող վերանորոգման թերությունները (պառոկներ)։ Կոշկեղենի վերանորոգման գործում խոտան վորոշելու կարգը։ 2-րդ տեսակի կամ խոտան վերանորոգում կատարելու համար, վերանորոգող կոշկակարի պատասխանատվության կարգը և աստիճանը։ Խոտանին դասելու յենթակա կոշկեղենը պատվիրատուին հանձնելու անթույլատրելիությունը։ Խոտանին դասած, վերանորոգումը վերափոխելու համար արհեստանոց վերադարձնելու կարգը։ Խոտանն ուղղելը։ Խոտանի բնութագիրը, վորը հնարավոր չե ուղղել։ Պատասխանատվության կարգը այն կոշկեղենի համար, վորպիսին չի կարող հանձնվել պատվիրատուին, փչացնելու հետևանքով։ Վերանորոգող կոշկակարի աշխատավարձի կախումը նրա կատարած վերանորոգման վորակից։

**Թեմա վեցերորդ** Աշխատանքի տեղի կազմակերպումը, անվտանգության տեխնիկա և աշխպաշտպանությունը։

Տնտհաշվարկի իմաստը և նշանակությունը վերանորոգման արհեստանոցներում։ Արհեստանոցի նախահաշիվը և ծրագիրը վորոշելը։ Աշխատավարձի հաշվարկի կարգը։ Աշխատանքի պրոգրեսիվ-գործարքային վարձատրությունը կոշկեղենի վերանորոգման արհեստանոցներում։ Արտադրական նորմաները, վարձաչափերը (րասցենկաները) ըստ առանձին տեսակների և վերանորոգման ոպերացիաների։ Վերանորոգումների տեսակները վորոշելը։ Խոտանը բնորոշելու և վերանորոգման վորակի համար արտելականի նյութական պատասխանատվություն կրելու կարգը։ Ըստ տնտհաշվարկի՝ արդյունքների տնտեսումը (կամ վնասը) բաժանելու կարգը։ Ըստ տնտհաշվարկի՝ վոչ տեսակավոր (նեսորտնի) վերանորոգում կատարելու համար տնտեսում ստանալու իրավունքներից զրկելը։ Կոշկեղենի վերանորոգումների աշխատանքը ստախանովյան մեթոդներով կազմակերպելը։ Աշխատանքի բաժանման նշանակությունը և բարձրորակ աշխատողներին լրացուցիչ և ոժանդակ գործողություններ կատարելուց ազատելը, Մի զույգ արտադրելու սիստեմայի առավելությունները (աշխատանքի բաժանման ժամանակ) ամբողջ արտադրական պարտիան հավաքելու սիստեմայի նկատմամբ։

Մեքենաների և դազգյահների նախազգուշական (պրեդուպրեդիտելնի) վերանորոգման նշանակությունը, մինչև աշխատանքն սկսելը նրանց ամենորյա ստուգումը և սիստեմատիկաբար ամենորյա խնամք տանելը։ Կիսաֆաբրիկատների և ոժանդակ նյութերի (ֆուրնիտուրայի) տեսակավորում կազմակերպելը, մինչև նրանց հասցնելը բանվորական դազգյահին։ Անհատական դազգյահի առավելությունները։ Ոժանդակ նյութերի (ֆուրնիտու-

բայի) և գործիքների՝ դազգյահի վրա ճիշտ դասավորելու նշանակությունը։ Նորմալ աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ գործիքների քանակը և տեսակները (ասորտիմենտը)։ Աշխատանքի տեղի մաքրություն, ճիշտ լուսավորություն և նորմալ օդափոխության նշանակությունը։

Կաղապարների ճիշտ պահելու և դասավորելու նշանակությունն ու անհրաժեշտ քանակությամբ կաղապարներ ունենալը։ Արտադրողականությունը բարձրացնելու աշխատանքի ձևերը (պրիոմները)։ Աշխատանքի ստախանովյան մեթոդների յուրացնելը և դրա հետ կապված արտելականի աշխատավարձի բարձրացումը։ Սարքավորումը մաքսիմալ օգտագործելու նշանակությունը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, հումույթի և նյութերի տնտեսումը, վոչ արտադրական ծախքերի կրճատումը, արտադրության և տեխնիկական նորմավորման ճիշտ կազմակերպումը։ Վնասարարության հետևանքները վերացնելը։

Սոցիալիստական արտադրության մեջ անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության դերն ու նշանակությունը։ Համարդկոոպխորհրդի նախագահության 1938 թ. մարտի 2-ի վորոշումը՝ «Աշխպաշտպանության և տեխնիկայի անվտանգության դրությունը արդկոոպերացիայում» մասին։ Տեխնիկայի անվտանգության կանոնները։ Մեքենաներ և դազգյահներ (ստանոկներ) սպասարկելու ժամանակ անվտանգության կանոնները, կտրող գործիքի հետ վերաբերվելիս։ Դժբախտ պատահարները կանխելու համար մեքենաների և մեխանիզմների շարժվող մասերը ցանկապատելու կանոնները։ Գործադրվող ցանկապատերի տեսակները (տիպերը)։

Սանիտար-տեխնիկական և առողջաբանական (գիգիենա) պայմանները ցեխում։ Զգոդ և օդ մաքրելու կառուցվածքներ։ Դժբախտ պատահարների ժամանակ առաջին օգնություն ցույց տալու կանոնները։ Հակահրդեհային միջոցառումներ։

## Գ) ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

**Յերկրորդ թեմայի շուրջը։** «Կոշկեղենի վերանորոգման գործում գործածվող կխաֆուրնիտուրա)», կաշվի տեսքը և տեսակի բնորոշումը։ Կաշվի, պլաստկոժի և տափակ ռեզինի թերությունները (պառոկները) վորոշելը։ Ուտիլի և մնացորդների (ոտխոդների) գործադրումը կոշկեղենի վերանորոգման գործում։ Գործադրվող օժանդակ նյութերի (ֆուրնիտուրայի) վորակի վորոշելը։

**Յերրորդ թեմայի շուրջը։** «Կաղապարներ և գործիքներ, կոշկեղենի վերանորոգման արհեստանոցին անհրաժեշտ կաղապարների քանակը և տեսակները (ասորտիմենտը) վորոշելը։ Գործիքների խնամքը և նրանց օգտագործումը»։

**Չորրորդ թեմայի շուրջը։** «Կոշկեղենի վերանորոգման տեխնիկական պրոցեսը»։ Կոշկեղենի ներբանի առանձին մասերի մաշվածության և պիտանիության աստիճանը վորոշելը։ Վորոշել անհրաժեշտ նորոգման բնույթը, և յելնելով կոշկեղենի տեսակից ու գործադրվող նյութերից, վորոշել ներբանի ամրացման լավագույն մեթոդի նպատակահարմարությունը։ Կաշվե կոշկեղեն նորոգելու պրոցեսների հետևողականությունը։ Զգելով կարկատան դնելը, մասամբ սոսինձով կպցնելու դեպքում։ Կոշկեղենի յերեսքաշելը (զատյաժկա)։ Կոշկեղենի ներբանի ամրացնելը ռանտով, մեխով կամ համակցելու (կոմբինիրովաննի) մեթոդով։ Կոշկեղենի ոտդելկան։

Թաղիքյա և ռեզինե կոշկեղենի նորոգման պրոցեսների հետևողականությունը։ Թաղիքյա ներբանի նախորոք սարոչկա տալու և կոշկեղենի ներբանի նախորոք կարելու ժամանակ դրատենի բիզով կամ կեռով (կրյուչոկով) աշխատելը։ Ռեզինե մասերի և կոշկեղենի թրաշելը և ռեզինե մասեր ձևելը—կարելը։

**Հինգերորդ թեմայի շուրջը։** «Կոշկեղենի վերանորոգման տեխնիկական պայմանները և խոտանի բնորոշումը (բրակյորաժ)։ Վերանորոգումների թերությունները (պառոկներ), թերությունները վերացնելը։ Կատարած վերանորոգումների տեսակների վորոշելը։

## Դ) ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

**Յերկրորդ թեմայի շուրջը։** Թեմայի խնդիրն է՝ յուրացնել անհրաժեշտ գործիմացություն, գործադրվող կխաֆաբրիկատների, օժանդակ նյութերի (ֆուրնիտուրայի) և քիմիական նյութերի մասին։ Թեման անցնելիս պետք է ցուցադրել նյութերը և ցույց տալ նյութերի մեջ պատահող թերությունները (պառոկները) և ամեն մի տեսակի օժանդակ նյութերի (ֆուրնիտուրայի) ու քիմիական նյութերի առանձնահատկությունը։

**Յերրորդ թեմայի շուրջը։** «Կաղապարներ և գործիքներ» թեման անցնելիս, անհրաժեշտ է վոչ թե միայն ցուցադրել ամեն

մի տեսակի գործիքը և կաղապարը, այլ և ցույց տալ թե ինչպես ճիշտ կազմակերպել կաղապարների պահելը և դասավորելը, ելնելով աշխատանքի պրոցեսից (աշխատանքի բաժանում կամ անհատական աշխատանք), գործիքները դազգյահի վրա դասավորելու ռացիոնալ ձևը և ցույց տալ ամեն մի տեսակի գործիքով աշխատելու լավագույն ձևերը:

**Չորրորդ թեմայի շուրջը:** Այս թեման անցնելիս ավելի նպատակահարմար է կազմակերպել ինչպես կոշկեղենի հիմնական տեսակների, այնպես էլ ցերեսացույի և տակացույի առանձին մասերի ցուցադրություն, ավելի մանրամասն կանգ առնելով ամեն մի տեսակի կոշկեղենի տարբերության և ամեն մի մասի նշանակության վրա: Ավելի մանրամասն պետք է կանգ առնել այն տեսակի կոշկեղենի վրա, վորոնք ավելի բնորոշ են տվյալ վայրում և ավելի հաճախ են ընդունվում վերանորոգման համար: Կոշկեղենի կարելու տեխնոլոգիական պրոցեսի հետ ծանոթանալու համար, ոգտավետ կլինի կազմակերպել էքսկուրսիաներ դեպի պետ-արդյունաբերության կամ արդկոոպերացիայի կոշկեղենի ֆաբրիկան:

Թեմայի 2-րդ մասը հարկավոր է անցկացնել վերանորոգող կոշկակարի դազգյահի մոտ, նորոգման ամեն մի ոպերացիան քննարկելով, ցույց տալով ամեն մի պրոցեսի վրա աշխատելու ճիշտ մեթոդները, վորակի պահանջը և վերանորոգման թերությունները, վորոնք կարող են շեղում հանդիսանալ տվյալ պրոցեսի համար առաջադրված մեթոդների նկատմամբ: Անհրաժեշտ է լուսաբանել կոշկեղենի վնասվածության զանազան դեպքերը և այդ ուղղելու ձևերը (պրյոմները): Թեման պետք է անցնել կոշկեղենի վերանորոգման մի վորևէ որինակելի արհեստանոցում: Թեմայի 1-ին մասը պետք է անցկացնել զրույցի ձևով, ցուցադրելով կոշկեղենի մաշվածության զանազան աստիճանները (հնարավորության դեպքում վերանորոգումից առաջ և հետո):

Ցանկալի յե ցուցադրել կոշկեղենի նորոգման տեխնոլոգիան ըստ պրոցեսների հետևողականության, զուգընթաց ցուցադրելով և բացատրելով ամեն մի պրոցեսի նշանակությունը և աշխատանքի վորակի պահանջը:

**Հինգերորդ թեմայի շուրջը:** Հինգերորդ թեմայի անցնելը պետք է կազմակերպել վերանորոգված կոշկեղենի փաստացի թերությունները քննարկելով (վորպիսին վերանորոգված է մի վորևէ արհեստանոցում պատվիրատուին հանձնելու համար) և



թերությունների հիման վրա վորոշել թե այդ նորոգումը վոր կարգի յե (սորտի յե) պատկանում.

**Վեցերորդ թեմայի շուրջը:** Վեցերորդ թեման պետք է անցկացնել զրույցի կարգով, միաժամանակ կազմակերպելով տվյալ շրջանի մի վորևէ առաջավոր արհեստանոցի տնտհաշվարքի անալիզը: Այդ աշխատանքը կատարելիս անհրաժեշտ է հատուկ շեշտել քննարկվող արհեստանոցի պլանավորման և աշխատանքի կազմակերպման մեջ յեղած թերությունները:

Աշխատանքի վայրը—տեղը լավ կազմակերպելու մասին զրուցելիս, պետք է ցուցադրել լավագույն ստախանովականների աշխատանքների որինակները:

Վերանորոգման արհեստանոցում աշխատելիս, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել տեխնիկայի անվտանգության վրա:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ի. Վ. ՍՏԱԼԻՆ: Ստախանովականների Համամիութենական առաջին խորհրդակցությունում արտասանած ճառը, ՀԿ(բ)ԿԿ հրատարակ., 1935 թ.):

2. Արտելի կանոնադրությունը:

3. Ն. Գ. ԿՈՄԻՍԱՐՈՎ: Կոշկեղենի վերանորոգում, ակումբների դասագիրք, ԿՈԳԻԶ, 1938 թ.:

4. Ն. Գ. ԿՈՄԻՍԱՐՈՎ և ՅԵ. Ի. ՇՎԱՐՑ: Կոշկեղենի վերանորոգման արհեստանոցներ: Արհեստանոցների տեսակները և աշխատանքը տնտեսական ինքնուրույնության հիմունքներով (տնտհաշվարք), ԿՈԳԻԶ, 1938 թ.:

# 1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԵԽՄԻՆԻՄՈՒՄԻ ԾՐԱԳԻՐ ԿՈՇԿԵՂԵՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ՍՈՍԻՆՁՈՎ ԿՊՑՆԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿՈՇԿԱԿԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## 1. ԳՈՐԾԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ՅԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

### Ա) ԿՈՇԿԵՂԵՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ՍՈՍԻՆՁՈՎ ԿՊՑՆԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿՈՇԿԱԿԱՐԸ ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱ

*1. Կոշկեղենի հիմնական տեսակների կառուցվածքը և նրանց կարելու մեթոդների տարբերությունը. կոշկեղենի տակացույի ամեն մի առանձին մասի (ելեմենտի) նշանակությունը և ինչպիսի հատկություն պետք է ունենան նրանք:*

*2. Սոսինձով կպցնելու մեթոդներով կոշկեղեն նորոգելու տեխնոլոգիական պրոցեսը:*

*3. Ինչպիսի հատկություն պետք է ունենան հիմնական նյութերը, օժանդակ նյութերը (ֆուրնիտուրան), սոսինձը և քիմիական նյութերը:*

*4. Կաշվի և կաշի փոխարինող (զամենիտել) նյութերի հատկությունը, յելնելով կոշկեղենի տեսակից ու ամրացման մեթոդներից, կոշկեղենի առանձին մասերի վրա այդ նյութերի գործադրելու հնարավորությունը:*

*5. Սոսինձի մեթոդով ամրացնելու սարքավորման կառուցվածքը (հիդրո-մամլիչ՝ պրես), ձգող պահարան, տաքացման կամերա), նրա լրիվ արտադրողականությունը և այդ սարքավորման հետ վերաբերվելու կանոնները:*

*6. Կոշկեղենի վերանորոգման տեխնիկական պայմանները:*

*7. Վերանորոգման թերությունները (պառոկները), վորոնց հետևանքով վերանորոգված կոշկեղենը պետք է դասվի 2-րդ կարգին (սորտին) կամ խոտանին—այդ թերությունները կանխելու և վերացնելու միջոցառումները:*

*8. Աշխատանքի ստախանովյան մեթոդները և լավագույն վերանորոգող կոշկակարների—ստախանովականների նվաճումները:*

*9. Սահմանված արտադրական նորմաները և վարձաչափերը (ռասցենկաները) ըստ աշխատանքի առանձին օպերացիաների, և նյութերի ու սոսինձի գործածման նորմաները:*

*10. Սոսինձի մեթոդով կպցնելու ժամանակ հակահրդեհային պաշտպանության հիմնական պահանջները:*

*11. Աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության անհրաժեշտ միջոցառումները:*

*12. Տնտհաշվարքի իմաստը և նշանակությունը կոշկեղենի վերանորոգման արհեստանոցներում, աշխատավարձի հաշվարքի և վճարման կարգը:*

### Բ) ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿՈՇԿԱԿԱՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ

*1. Վորոշել վերանորոգման յենթակա կոշկեղենի առանձին մասերի պիտանիության աստիճանը—հին ռանտի (կամ ռբվոդկայի) ստելկայի, կրունկների և այլն:*

*2. Սոսինձով կպցնելու մեթոդով վերանորոգելու համար, վորոշել սոսինձի և քիմիական նյութերի պիտանիությունը:*

*3. Սոսինձով կպցնելու մեթոդով վերանորոգելու համար կոշկեղենի և նրա մասերի պատրաստելու ճշտությունը վորոշելը:*

*4. Ռուտապերչի սոսինձով վերանորոգելու դեպքում կարգավորել մամլիչը (պրեսը) և տաքացնող կամերան:*

*5. Օգտվել օդափոխիչ (վենտիլացիոնի) պահարանով:*

*6. Ինքնուրույն նորոգել կոշկեղենը՝ սոսինձով կպցնելու մեթոդով, կաշվից և ռեզինից կոշկեղենը—ռուտապերչի սոսինձով, թաղիքյա կոշկեղենը—ցելյուլոիդի սոսինձով:*

*7. Ստախանովյան ձևով կազմակերպել իր աշխատանքի վայրը-տեղը և աշխատել ստախանովյան մեթոդներով:*

ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱՐ

2. Սոսինձով կպցնելու մեթոդով կոշկեղենի վերանորոգման վրա աշխատող կոշկակարների տեխմինիմումի դասընթացների ուսման պլանը

| №№ ը/կ | Առարկաների անվանումը | Ուսման ժամերի թիվը ըստ ամիսների | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | |
| 1 | ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը (հիմնական օրենք) . . . . . . . | 10 | 10 | — | — | 20 |
| 2 | Ներածություն (տեխնիկական ուսուցման խնդիրները, ստախանովյան շարժումը և արդկոոպերացիայի կազմ. կառուցվածքը . . . . . | 8 | — | — | — | 8 |
| 3 | Մասնագիտական գործ . . . . . | 5 | 15 | 25 | 25 | 70 |
| | Ընդամենը | 23 | 25 | 25 | 25 | 98 |

3. Մասնագիտական գործ

*ա) ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ*

| № № ը/կ | Թեմայի բովանդակությունը | Ժամերի քանակը | | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | | Թեմատիկ ուսուցում | Արտադրական հրահանգավ. | |
| 1 | Ընդհանուր տեսություն կոշկեղենի արտադրության մասին . . . . . . . | 4 | 2 | 6 |
| 2 | Կոշկեղենը սոսինձով կպցնելու մեթոդը կիրառելու ժամանակ գործադրվող կիսաֆաբրիկատներ, օժանդակ նյութեր (ֆուրնիտուրա) և սոսինձներ | 8 | 4 | 12 |
| 3 | Սոսինձով կպցնելու մեթոդով աշխատելու սարքավորում . . . . . . . | 4 | 4 | 8 |
| 4 | Կոշկեղենի նորոգման տեսակները և նրանց բնութագիրը . . . . . . . . | 6 | 2 | 8 |
| 5 | Կոշկեղենի սոսինձով կպցնելու մեթոդով վերանորոգման տեխնոլոգիական պրոցեսը . . . . . . . . . . | 10 | 6 | 16 |
| 6 | Կոշկեղենի վերանորոգման տեխնիկական պայմանները և խոտանի բնորոշումը (բրակյորաժ) . . . . . . . . | 4 | — | 4 |
| 7 | Արտադրության կազմակերպումը, անվտանգության տեխնիկա և աշխապաշտպանություն . . . . . . . . . | 16 | — | 16 |
| | Ընդամենը | 52 | 18 | 70 |



## *բ) ԾՐԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

**Թեմա առաջին:** *Ընդհանուր տեսություն կոշկեղենի արտադրության մասին (էջ 6)։*

**Թեմա յերկրորդ:** *Կոշկեղենի տակը սոսինձով ամրացնելու մեթոդը կիրառելու ժամանակ գործադրվող կիսաֆաբրիկատներ, օժանդակ նյութեր (ֆուրնիտուրա) և սոսինձներ։*

*Բնական կաշի։ Կաշվի տեսակները, դաբաղելու մեթոդները, կաշվի հատկությունը։ Կոշկեղենի ներքանի վերանորոգման գործում գործադրվող կաշի փոխարինողներ (զամենիտելներ)։ Տափակ ռեզին։ Ֆիզիկո-մեխանիկական հատկությունը. կաշվի նկատմամբ ունեցած առավելությունները և թերությունները։ Պլաստկոժ—պլաստկոժի բաղադրությունը, նրա հատկությունը և առանձնահատկությունը տափակ ռեզինի և կաշվի նկատմամբ։ Զանազան չափերի պաղմյոտկայի և նաբոյկայի վրա գործածվող կաշու, տափակ ռեզինի և պլաստկոժի գործածման նորմաները։ Զանազան տեսակի վերանորոգվող կոշկեղենի վրա գործադրվող տափակ ռեզինի և պլաստկոժի հատկությունը։ Տափակ ռեզինով կամ պլաստկոժով կոշկեղենի տակը վերանորոգելու դեպքում, սոսինձով կպցնելու մեթոդի առավելությունները։ Կարտոնի զանազան տեսակները, նրանց հատկությունը և գործադրելու հատկությունը վերանորոգման գործում։ Կոշկեղենի տակը սոսինձով ամրացնելու մեթոդը կիրառելու դեպքում, պրոստիլկայի համար կաշե կարտոնի (կոժկարտոն) գործադրման աննպատակահարմարությունը։ Պրոստիլկայի նյութեր—ռեզինացված կտորեղեն, կոպիտ բրդի մնացորդներ (*грубошерстние отходы*), կաշի ուտիլի մնացորդներ և փափուկ կաշվի մնացորդներ (լոսկուտներ)։*

*Օժանդակ նյութեր (ֆուրնիտուրա)—մեխ փայտից և յերկաթալարից, յերկաթյա շպիլկա և տեկս։ Սոսինձով ամրացնելու մեթոդը կիրառելու ժամանակ վերանորոգման զանազան պրոցեսներում գործադրվող մեխերի և շպիլկաների զանազան տեսակներ և չափեր։ Սոսինձի տեսակը, վորը գործ է ածվում կոշկեղենի տակը սոսինձով ամրացնելու դեպքում։*

*Գուտապերչի սոսինձ—սոսինձի բաղադրությունը, նրա հատկությունը և կաշվի ու կաշի փոխարինողներ կպցնելու դիմացկունությունը։ Գուտապերչի ծագումը և նրա ձեռք բերումը։ Գուտապերչի սոսինձ պատրաստելը։ Գուտապերչի սոսինձը պա-*

հելու և նրա հետ վերաբերվելու կանոնները: Գուտապերչի սոսինձի կրակավտանգությունը: Գուտապերչի սոսինձի վորակը և գործածման պիտանիությունը վորոշելը: Թանձրացած սոսինձ տաքացնելը:

Կաուչուկի սոսինձ: Կաուչուկի ծագումը և նրա ձեռք բերումը: Բնական և սինթետիկ կաուչուկ:

Ռեզինե սոսինձ—նրա հատկությունը և կպցնելու ունակությունը: Ռեզինե սոսինձի մեջ կաուչուկի պարունակումը: Հրաբուխացորդներ (վուլկանիզատորներ) և կաուչուկի հրաբխացման (վուլկանիզացիայի) նշանակությունը: Կաուչուկի սոսինձի կրակավտանգությունը: Գուտապերչի և կաուչուկի սոսինձների ջերմահաստատությունը (термоуетойчивость):

Հասկացողություն նյութերի և կիսաֆաբրիկատների ըստանդարտների մասին:

**Թեմա յերրորդ:** Սոսինձով կպցնելու մեթոդով ամրացնելու սարքավորում:

Մամլիչներ—պնեվմատիկական (ոդաճնշիչ) և հիդրավլիկ (ջրային): Արդկոոպերացիայի գիտական-եքսպերիմենտալ ինստիտուտի սիստեմայի մամլիչներ, նրանց կառուցվածքը և աշխատելու սկզբունքը: Մամլիչի հիմնական աշխատանքային մեխանիզմները: Մամլիչի գլուխը (գոլովկա) և նրա առանձին մասերը: Ճնշելու հարմարեցումները: Մամլիչի խնամելը: Յելնելով կոշկեղենի տակը ամրացնելու մեթոդից, մամլիչի ունակությունը:

Կպցնելու յենթակա մասերը տաքացնելու կամերաներ: Միակողմանի և յերկկողմանի տաքացման կամերաներ: Կամերայի կառուցվածքը, նրա ունակությունը: Աշխատելու կանոնները և կամերայի խնամելը:

Փոքր վերանորոգումներ կատարելու ժամանակ, գուտապերչի պլյոնկա տաքացնելու ելեկտրոպլիտաներ: Ոդամաքրիչ (վենտիլյացիոն) պահարաններ, նրանց կառուցվածքը: Ինչ է պահանջվում ոդամաքրիչ (վենտիլյացիոն) կահավորումից: Գործադրվող մոտորներ և ոդամաքրիչներ (վենտիլյատորներ):

**Թեմա չորրորդ:** Կոշկեղենի վերանորոգման տեսակները և վերանորոգման բնութագիրը:

Ավելի քան հաճախ պատահող կոշկեղենի վնասվածքներ: Նորոգումների դասավորումը (կլասիֆիկացիան)—խոշոր, միջակ և փոքր նորոգումներ: Վերանորոգման ժամանակ կոշկեղենի տակը



ամրացնելու մեթոդները: Կոշկեղենը տափակ ռեզինով ամրացնելու համար սոսինձով կպցնելու մեթոդների առավելությունները, ամրացնելու համակցական (կոմբինացիոն) մեթոդներ: Կոշկեղենի վերանորոգման պրոցեսների հետեվողականությունը:

Յելնելով նրա վերանորոգման բնույթից և ամրացնելու մեթոդներից: Ներբանի և նրա առանձին մասերի մաշվածության և պիտանիության աստիճանը վորոշելը:

Կոշկեղենի վերանորոգման ամենապատասխանատու պրոցեսները: Ռանտի կամ ոբվոդկայի, կիսատելկայի, պրոստելկայի նշանակությունը: Ոտդելկայի պրոցեսների նշանակությունը: Փայտից կամ կաշվից բարձր կրունկներ պատրաստելու դեպքում, նրանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ պահանջը: Վերանորոգման մեքենայացումը: Սոսինձով ամրացնելու մեթոդը գործադրելու համար անհրաժեշտ սարքավորումը: Թաղիքյա կոշկեղենի նորոգումը: Թաղիքյա կոշկեղենի վերանորոգման պրոցեսների հետեվողականությունը: Ռեզինե կոշկեղենի նորոգումը: Կոշկեղենը ժամանակից շուտ մաշվելու պատճառները: Կոշկեղենի գործածման ժամկետը յերկարացնելու համար փոքր վերանորոգումների նշանակությունը:

**Թեմա հինգերորդ:** Կոշկեղենի, սոսինձով կպցնելու մեթոդով, վերանորոգման տեխնոլոգիական պրոցեսը:

Կոշկեղենի տակը սոսինձով ամրացնելու գործադրվող մեթոդները: Սոսինձով ամրացնելու մեթոդների նշանակությունը, տափակ ռեզինով վերանորոգում կատարելու դեպքում: Սոսինձով ամրացնելու մեթոդների նշանակությունը: Կոշկեղենի տեսակներ, վորոնց ամրացնելը սոսինձով կպցնելու մեթոդով նպատակահարմար չէ: Ինչպես պետք է նախապատրաստել կոշկեղենը հատկապես սոսինձով ամրացնելու մեթոդները գործադրելու համար: Ինչպիսի հատկություն պետք է ունենան ռանտը կամ ոբվոդկան և կոշկեղենի պրոստիլկան: Ռեզինացված կամ թավ կտորից պրոստիլկայի առավելությունները: Պրոստիլկայի պատրաստելը և ամրացնելը: Կոշկեղենի և նրա մասերի (պադմյոտկա և նաբոյկա) պատրաստելը սոսինձով ամրացնելու համար: Կոշկեղենի և նրա մասերի քերելը (взерошивание):

Գուտապերչի սոսինձով կպցնելու մեթոդիկան: Միակողմանի և յերկկողմանի տաքացման ձեվերը: Միակողմանի տաքացման առավելությունները: Միակողմանի տաքացման յերկու ձեվ (վարիանտ): Պլաստկոժը գուտապերչի սոսինձով կպցնելու պայ-

մանները: Պլաստկոժով վերանորոգում կատարելու դեպքում յերկկողմանի տաքացման նպատակահարմարությունը: Տաքացման տևողությունը և ջերմությունը: Առանձին մասերը կոշկեղենի վրա դնելը և կոշկեղենը մամլելը: Մամլելու տևողությունը միակողմանի և յերկկողմանի տաքացման դեպքում:

Գուտապերչի սոսինձով առանց մամլիչի և ջերմոց պահարանի ռուբչիկներ, կոսյաչոկներ և նաբոյկաներ կպցնելը՝ գուտապերչի պլյոնկան ելեկտրոպլետկայի վրա տաքացնելու միջոցով: Կոշկեղենի աստառի նորոգումը գուտապերչի սոսինձով և դրա համար գործադրվող գործիքը: Կոշկեղենի տակը ամրացնելը կաուչուկի սոսինձով՝ սառը հրաբխացման մեթոդով և ինքնահրաբխացվող սոսինձներով:

Թաղիքյա կոշկեղենի նորոգումը սոսինձով կպցնելու մեթոդով: Գործադրվող ցելլյուլոյդի սոսինձի բաղադրությունը: Գուտապերչի և կաուչուկի սոսինձների ջերմադիմացկունության աստիճանը (բարձր ջերմության ազդեցության դիմադրումը): Հրակի վտանգը սոսինձով ամրացնելու մեթոդը գործադրելու ժամանակ: Սոսինձով ամրացնելու մեթոդով վերանորոգում կատարողների աշխատանքի պաշտպանության միջոցառումները: Փաստեր, վորոնք ազդում են սոսինձով ամրացնելու մեթոդով վերանորոգման վորակի վրա:

**Թեմա վեցերորդ:** Կոշկեղենի վերանորոգման տեխնիկական պայմանները և խոտանի բնորոշելը (բրակյորաժ):

Կոշկեղենի վերանորոգման դասավորումը (կլասսիֆիկացիան) ըստ նրա վորակի: Ինչպիսի վորակ պետք է ունենա առաջին կարգին դասվող վերանորոգված կոշկեղենը:

Կոշկեղենի ներբանի հիմնական թերությունները (պառոկները) սոսինձի մեթոդով կպցնելու դեպքում—թեքված պադմյոտկաներ և նաբոյկաներ, սապատավոր (горбатие) պադմյոտկաներ կամ մամլիչով ներս գցած, ուրեղի մեջ անցքեր թողնելը և այլն: 2-րդ տեսակին (սորտին) կամ խոտանին դասվող վերանորոգման թերությունները (պառոկները), վերանորոգման գործում կոշկեղենի խոտան վորոշելու կարգը: 2-րդ տեսակի կամ խոտան վերանորոգում կատարելու համար վերանորոգող կոշկակարի պատասխանատվության կարգը և աստիճանը:

Խոտանին դասվող կոշկեղենը պատվիրատուին հանձնելու անթույլատրելիությունը: Խոտանին դասած վերանորոգումը վերափոխելու համար արհեստանոց վերադարձնելու կարգը: Խո-



տանի բնութագիրը, վորը հնարավոր չե ուղղել: Պատասխանատվության կարգը այն կոշկեղենի համար, վորպիսին չի կարող հանձնվել պատվիրատուին՝ փչանալու հետեվանքով:

**Թեմա յոթերորդ:** Արտադրության կազմակերպումը, անվտանգության տեխնիկա և աշխպաշտպանություն:

Կոշկեղենի վերանորոգումների աշխատանքը ստախանովյան մեթոդներով կազմակերպելը: Աշխատանքի բաժանման նշանակությունը և բարձրորակ աշխատողներին լրացուցիչ ոժանդակ գործողություններ կատարելուց ազատելը: Մի զույգ արտադրելու սխեմայի առավելությունները (աշխատանքի բաժանման ժամանակ) ամբողջ արտադրական պարտյա հավաքելու սխեմայի նկատմամբ:

Մեքենաների ու դազգյահների նախազգուշական (պրեդուպրեդիտելնի) վերանորոգման նշանակությունը, նրանց ամենօրյա, մինչ աշխատանքը սկսելը, ստուգումը և սիստեմատիկաբար ամենօրյա խնամք տանելը: Կիսաֆաբրիկատների և ոժանդակ նյութերի (ֆուրնիտուրայի) տեսակավորում կազմակերպելը, մինչև նրանց հասցնելը բանվորական դազգյահին: Աշխատանք տալը և հավաքելը:

Ինչ է պահանջվում բանվորական դազգյահից: Անհատական դազգյահի առավելությունները: Դազգյահի վրա ոժանդակ նյութերի (ֆուրնիտուրայի) և գործիքների ճիշտ դասավորելու նշանակությունը:

Տնտհաշվարքը կոշկեղենի վերանորոգման արհեստանոցում: Ծանոթանալ արհեստանոցի արտադրական նախահաշվի և ծրագրի հետ: Աշխատավարձի վճարման սիստեման: Աշխատանքի պրոգրեսսիվ-գործարքային վարձատրություն: Աշխատավարձի հաշվառքի կարգը: Արտադրական նորմաները և վարձաչափերը (րասցենկաները) ըստ առանձին վերանորոգման տեսակների և ոպերացիաների: Վերանորոգման տեսակները (սորտնոստ) վորոշելը: Խոտանը բնորոշելու և վերանորոգման վորակի համար արտելականի նյութական պատասխանատվություն կրելու կարգը: Ըստ տնտհաշվարքի արդյունքների տնտեսումը (կամ վնասի), բաժանում կատարելու կարգը: Ըստ տնտհաշվարքի վոչ տեսակավոր վերանորոգում կատարելու համար տնտեսում ստանալու իրավունքներից զրկելը: Վնասարարության հետեվանքների վերացնելը:

Սոցիալիստական արտադրության մեջ անվտանգության

տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության դերը և նշանակությունը: Համարդկոմխորհրդի նախագահության 1938 թ. մարտի 2-ի վորոշումը «Աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության դրությունը արդկոոպերացիայում» մասին:

Տեխնիկայի անվտանգության կանոնները, մեքենաներ և դազգյահներ (ստանոկներ) սպասարկելու ժամանակ:

Մեքենաների և դազգյահների (ստանոկների) շարժվող մասերը ցանկապատելու նշանակությունը և նրանց կոնստրուկցիան: Անվտանգության կանոնները, կտրող գործիքի հետ վերաբերվելիս:

Սոսինձով կպցնելու մեթոդով աշխատելու ժամանակ (կրակից բռնկվող նյութեր) տեխնիկայի անվտանգության հատուկ կանոնները: Սոսինձով կպցնելու մեթոդով կոշկեղեն վերանորոգելիս ինչպես գուտապերչի և կաուչուկի սոսինձի, նույնպես էլ կրակից բռնկվող նյութերի հետ վերաբերվելու և պահելու կանոնները:

Սոսինձով կպցնելու մեթոդով վերանորոգում կատարող աշխատողների աշխատանքի պաշտպանության կանոնները:

Ոգափոխիչ պահարաններ և ոգափոխիչ սարքավորումներ: Արհեստանոցի ոգափոխելը: Արհեստանոցի և սոսինձով կպցնելու մեթոդով վերանորոգող կոշկակարի աշխատանքի տեղի լուսավորումը: Հակահրդեհային պաշտպանություն: Հակահրդեհային պաշտպանության հատուկ կանոնները այն շենքերի նկատմամբ, վորտեղ գտնվում են կրակից շուտ բռնկվող նյութեր: Գույք և սարքավորում: Հրդեհային ազդանշաններ (սիգնալիզացիա): Գույքը, սարքավորումը և ազդանշանները (սիգնալիզացիան) ոգտագործելու կանոնները: Դժբախտ պատահարների ժամանակ առաջին ոգնություն ցույց տալու կանոնները:

## Գ) ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

**Առաջին թեմայի շուրջը:** «Ընդհանուր տեսություն կոշկեղենի արտադրության մասին»:

Կաղապարներ չափելը ըստ յերկարության և հաստության (լիքության) կոշկեղենի ներբանի և յերեսի առանձին մասերի (ելեմենտների) թերությունները (պակասները) վորոշելը:

**Յերկրորդ թեմայի շուրջը:** «Կոշկեղենի ներբանը սոսինձով կպցնելու մեթոդները կիրառելու ժամանակ գործածվող



կիսաֆաբրիկատներ, ոժանդակ նյութեր (ֆուրնիտուրա) և սոսինձներ»:

Կաշվի տեսքը և տեսակը բնորոշելը: Կաշվի, պլաստկոժի և տափակ ռեզինի թերությունները (պակասները) վորոշելը: Գուտապերչի սոսինձի պիտանիությունը վորոշելը: Թանձրացած սոսինձ տաքացնելը: Կաուչուկի սոսինձի վորակը վորոշելը:

**Յերրորդ թեմայի շուրջը:** «Սոսինձով կպցնելու մեթոդով ամրացնելու սարքավորում»:

Հիդրավլիկ մամլիչի կարգավորելը (ռեգուլիրովկա): Մամլիչի ոգտագործումը կաշվի, ռեզինի և թաղիքյա կոշկեղենի նորոգման ժամանակ: Ջերմոց պահարանի միացնելը և աշխատանքները կարգավորելը (ռեգուլիրովկա):

**Չորրորդ թեմայի շուրջը:** «Կոշկեղենի նորոգման տեսակները և բնութագիրը:

Կոշկեղենի ներբանի առանձին մասերի մաշվածության և պիտանիության աստիճանը վորոշելը: Վորոշել անհրաժեշտ նորոգման բնույթը և, յելնելով կոշկեղենի տեսակից ու գործածվող նյութերից, վորոշել ներբանի ամրացման լավագույն մեթոդի նպատակահարմարությունը:

**Հինգերորդ թեմայի շուրջը:** «Սոսինձով կպցնելու մեթոդով կոշկեղենի վերանորոգման տեխնոլոգիական պրոցեսը»:

Կոշկեղենի ներբանը Գուտապերչի սոսինձով ամրացնելու դեպքում աշխատանքային պրոցեսների կատարման հետևողականությունը: Միակողմանի և յերկկողմանի տաքացման մեթոդները:

Սոսինձով կպցնելու համար կոշկեղենի նախապատրաստելու ճշտությունը վորոշելը: Գուտապերչի սոսինձով ռուբչիկների, կայաչոկների, նաբոյկաների, կարկատանների և այլն նորոգումը: Թաղիքյա կոշկեղենի նորոգումը սոսինձով կպցնելու միջոցով:

## Դ) ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Առաջին թեման պետք է անցնել ինչպես կոշկեղենի հիմնական տեսակների, այնպես էլ տակացույի և յերեսացույի առանձին մասերի փոքրիկ ցուցադրություն կազմակերպելու միջոցով, տեսանելիորեն բացատրելով ամեն մի տեսակի կոշկեղենի տարբերությունը և ամեն մի մասի նշանակությունը: Ավելի մանրամասն պետք է կանգ առնել կոշկեղենի այն տեսակների

վրա, վորոնք ավելի բնորոշ են տվյալ վայրում և ավելի հաճախ են ընդունվում վերանորոգման համար։ Կոշկեղեն կարելու տեխնոլոգիական պրոցեսների հետ ծանոթանալու համար օգտավետ կլինի կազմակերպել էքսկուրսիա դեպի կոշկեղենի ֆաբրիկան։

Յերկրորդ թեմայի խնդիրն է—ուսումնասիրել գործադըրվող կիսաֆաբրիկատները, ոժանդակ նյութերը (ֆուրնիտուրան), սոսինձները և քիմիական նյութերը։ Թեման անցնելիս պետք է ցուցադրել ուսումնասիրվող նյութերը, տեսանելիորեն ցույց տալով պատահող թերությունները և վորոշելով տեսակն ու վորակը։

Յերրորդ թեման անցնելիս—սոսինձով կպցնելու մեթոդով ամրացնելու սարքավորում — հարկավոր է մանրամասն կանգ առնել հիդրավլիկ մամլիչների, չորացնող կամերաների և ոդափոխիչ պահարանների վրա այն հաշվով, վոր աշակերտը, սոսինձով կպցնելու մեթոդով վերանորոգում կատարելիս, կարողանա ճիշտ օգտագործել և սարքի գցել հիմնական սարքավորումը։

Չորրորդ թեմայի անցնելը պետք է կազմակերպել օրինակելի վերանորոգման արհեստանոցում։ Թեման պետք է անցկացընել զրույցի ձևով, ցուցադրելով կոշկեղենի մաշվածության զանազան աստիճանները (հնարավորության դեպքում վերանորոգումից առաջ և հետո)։

Ցանկալի յե ցուցադրել կոշկեղենի նորոգման տեխնոլոգիան ըստ պրոցեսների հետեվողականության, բացատրելով ամեն մի պրոցեսի նշանակությունը և աշխատանքի վորակի պահանջը։

Հինգերորդ թեման հարկավոր է անցկացնել վերանորոգող արտելականի դազգյահի մոտ, ամեն մի ոպերացիան քննարկելով, ցույց տալով ամեն մի պրոցեսի վրա աշխատելու ճիշտ ձևերը (պրիոմները), վորակի պահանջը և վերանորոգման թերությունները, վորոնք կարող են շեղում հանդիսանալ տվյալ պրոցեսի համար առաջադրված մեթոդների նկատմամբ։

Վեցերորդ թեմայի անցնելը պետք է կազմակերպել մանրամասն քննարկելով վերանորոգված կոշկեղենի փաստացի թերությունները (վորը պատրաստված է մի վորևե արհեստանոցում պատվիրատույին հանձնելու համար) և վերանորոգված կոշկեղենի հայտնաբերված թերությունների հիման վրա վորո-



շել թե այդ նորոգումը վոր կարգի յե (սորտի յե) պատկանում։

Յոթերորդ թեման պետք է անցկացնել զրույցի կարգով և պետք է ընթանա այդ տվյալ շրջանի առաջավոր արհեստանոցի տնտեսաշվարքի, աշխատանքի կազմակերպման անալիզը տալով։

Այդ աշխատանքը կատարելիս հարկավոր է հատուկ շեշտել քննարկվող արհեստանոցի տնտհաշվարքի և աշխատանքի կազմակերպման մեջ յեղած թերությունները։ Աշխատանքի տեղը լավ կազմակերպելու մասին խոսելիս, պետք է ցուցադրել լավագույն ստախանովականների աշխատանքների օրինակները։

## ԱՏԴԵԼԿԱՅԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎՐԱ, ԿՈՇԿԵՂԵՆԻ ԱՏԴԵԼԿԱ ԱՆՈՂ ԿՈՇԿԱԿԱՐՆԵՐԻ ՏԵԽՄԻՆԻՄՈՒՄԻ ԾՐԱԳԻՐ

### 1. ԳՈՐԾԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ՅԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

#### Ա) ԿՈՇԿԵՂԵՆԻ ԱՏԴԵԼԿԱ ԱՆՈՂԸ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ

1. Կոշկեղենի հիմնական տեսակների կառուցվածքը և նրանց կարելու մեթոդների տարբերությունը։ Կոշկեղենի տակացույի և յերեսացույի ամեն մի առանձին մասի (ելեմենտի) նշանակությունը և ինչ է պահանջվում նրանցից։

2. Տարբեր մեթոդներով ամրացվող կոշկեղենի վերանորոգման տեխնոլոգիական պրոցեսը և ամեն մի վերանորոգման պրոցեսից բղխող տեխնիկական պահանջը։

3. Ինչպիսի հատկություն պետք է ունենան կոշկեղենի ատդելկայի վրա գործադրվող ոժանդակ նյութերը (ֆուրնիտուրան) և քիմիական նյութերը։

4. Ատդելկայի գործիքներով աշխատելու ձևերը (պրիոմները) և նրանց խնամելու կանոնները։

5. Ատդելկան անելու մեքենաների և դազգյահների (ստանոկների) տեխնիկական ցուցանիշները, նրանց խնամելու կանոնները, զանազան ոպերացիայի վրա աշխատելու անվտանգության կանոնները և գաղահանումը ապահովող անհրաժեշտ հարմարեցումներ։

6. Կոշկեղենի ատդելկայի տեխնիկական պայմանները։

7. Խոտանը (բրակյորաժ) բնորոշելու սահմանված կարգը և ինչպիսի վորակ պետք է ունենա 1-ին տեսակի վերանորոգումը։

8. Ատդելկայի թերությունները (պառկները), վորոնց հետևանքով կոշկեղենը պետք է դասվի 2-րդ տեսակին (սորտին) կամ խոտանին. այդ թերությունները կանխելու և վերացնելու միջոցառումները։

9. 2-րդ տեսակի կամ խոտան վերանորոգում կատարելու համար ատդելկա անող կոշկակարի պատասխանատվության կարգը և աստիճանը։

10. Աշխատանքի ստախանովյան մեթոդները և ատդելկա անող ստախանովականների նվաճումները։

11. Սահմանված արտադրական նորմաները և վարձաչափը (րասցենկա) ըստ ատդելկայի առանձին պրոցեսների։

12. Տնտեսաշվարքի իմաստը և նշանակությունը կոշկեղենի վերանորոգման արհեստանոցներում, աշխատավարձի հաշվառքի և վճարման կարգը։

## Բ) ԿՈՃԿԵՂԵՆԻ ԱՏԴԵԼԿԱ ԱՆՈՂԸ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ

1. Կոշկակարական գործիք սրելը և ուղղելը (պրավկա)։
2. Աշխատել տարբեր սիստեմներին պատկանող ատդելկայի մեքենաների և դազգյահների (ստանոկների) վրա։
3. Կարգավորել և սարքի գցել (ատրեգուլիրովկա) մեքենաների բանող գործիքները (ֆրեզերները, խողանակները, ռաշպիլները և այլն)։
4. Ինքնուրույն կատարել կոշկեղենի ատդելկայի բոլոր պրոցեսները։
5. Ստախանովյան ձևով կազմակերպել իր աշխատանքի տեղը և աշխատել ստախանովյան մեթոդով։



2. Ատդելկայի մեքենաների վրա, կոշկեղենի ատդելկա անող կոշկակարների տեխմինիմումի դասընթացների ուսման պլանը

| №№ ը/կ | Առարկաների անվանումը | Ուսման ժամերի թիվը ըստ ամիսների 1 | 2 | 3 | 4 | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԽՍՀՄ Սահմանադրությունը (հիմնական օրենք) . . . . . . . | 10 | 10 | — | — | 20 |
| 2 | Ներածություն (տեխնիկական ուսուցման խնդիրները, ստախանովյան շարժումը և արդկոոպերացիայի կազմ. կառուցվածքը . . . . . | 8 | — | — | — | 8 |
| 3 | Մասնագիտական գործ . . . . | 5 | 15 | 25 | 25 | 70 |
| | Ընդամենը | 23 | 25 | 25 | 25 | 98 |

3. Մասնագիտական գործ

### ա) ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

| №№ ը/կ | Թեմայի բովանդակությունը | Ժամերի քանակը: Թեորետիկ ուսուցում | Ժամերի քանակը: Արտադրական հրահանգավորում | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Ընդհանուր տեսություն կոշկեղենի արտադրության մասին . . . . . . . | 4 | 2 | 6 |
| 2 | Կոշկեղենի ատդելկայի ժամանակ գործադրվող նյութերը և օժանդակ նյութերը (ֆուրնիտուրա) . . . . . | 2 | 2 | 4 |
| 3 | Կոշկեղենը ատդելկա անողի կոշկակարական գործիք . . . . . . . . . | 4 | 2 | 6 |
| 4 | Ատդելկա անելու դազգյահներ (ստանոկներ) և մեքենաներ . . . . . . . | 8 | 2 | 10 |
| 5 | Կոշկեղենի նորոգման տեսակները և բնութագիրը . . . . . . . . . . . . | 4 | 2 | 6 |
| 6 | Կոշկեղենի մեխանիկական ատդելկայի տեխնոլոգիական պրոցեսները . . | 10 | 8 | 18 |
| 7 | Կոշկեղենի ատդելկայի տեխնիկական պայմանները և գործի տեսակը վորոշելը . . . . . . . . . . . . . . | 2 | 2 | 4 |
| 8 | Արտադրության կազմակերպումը, անվտանգության տեխնիկա և աշխապաշտպանություն . . . . . . . . . . | 16 | — | 16 |
| | Ընդամենը | 50 | 20 | 70 |

## բ) ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Թեմա առաջին:** Ընդհանուր տեսություն կոշկեղենի արտադրության մասին (տես յերես 6):

**Թեմա յերկրորդ:** Կոշկեղենի ատդելկայի ժամանակ գործադրվող նյութեր և օժանդակ նյութեր (ֆուրնիտուրա):

Կոշկեղենի տակը նորոգելու ժամանակ գործադրվող կիսաֆաբրիկատներ—կաշի բնական, տափակ ռեզին, պլաստկոժ: Ամեն մի կիսաֆաբրիկատի հիմնական հատկությունները: Ըստ ամեն մի տեսակ կիսաֆաբրիկատի, ատդելկայի պրոցեսների յուրահատկությունները: Նյութեր, վորոնք գործ են ածվում ներսի ատդելկայի և կրունկների տակի (պոդպյատաչնիկների) համար: Ատդելկայի նյութեր՝ ատդելկի մոմ, ապակյա թուղթ, ներկ, ապրետուրա, լաք, կրեմ, և ինչպիսի հատկություն պետք է ունենան նրանք: Կոշկեղենի տակը ատդելկա անելու համար, ատդելկայի նյութերի գործադրման մոտավոր նորմաները: Նյութերի վորակի ազդեցությունը կոշկեղենի ատդելկայի վրա:

Հասկացողություն նյութերի և կիսաֆաբրիկատների ստանդարտների մասին:

**Թեմա յերրորդ:** Կոշկեղենը ատդելկա անողի կոշկակարական գործիք: Կոշկակարական դանակներ (պադմյոտկաները և նաբոյկաները վերջնականապես կտրելու համար): Ստելկա (կամ գրիֆել) և բրուսոկ (սրելու սարք), ֆամելյա (ուրեզնիկներ), ակեր չարխեր, կուսաչկի պագատոնովկա, միջի ռաշպիլ (վիսկրեբալկա), ֆրանսիական դանակ, կաղապարը հանելու կեռ (կրյուչոկ) վրձիններ, ելեկտրոպլետա (կամ պրիմուս):

Ռաշպիլներ, պոդպիլկաներ, թոքմաչիներ (ամբուս), խողանակներ: Ձեռքի և մեքենայացված ատդելկայի ժամանակ անհրաժեշտ գործիքների քանակը և տեսակները (ասորտիմենտը):

Ինչպիսի հատկություն պետք է ունենա ամեն մի տեսակ գործիքը: Գործիքը խնամելու կանոնները: Գործիքների ռացիոնալ դասավորումը: Ամեն մի տեսակ գործիքով աշխատելու ձևերը (պրիոմները): Արտելականին գործիք մատակարարելու կարգը: Ամեն մի տեսակ գործիքի ծառայության ժամկետը:

Գործիքների թիվը, վորոնք պետք է լինեն կոշկեղենի ատդելկա անող կոշկակարի անհատական օգտագործման տակ:

**Թեմա չորրորդ:** Ատդելկա անելու դազգյահներ (ստանոկներ) և մեքենաներ:

Համակցական (կոմբինիրովաննի) ատդելկայի դազգյահներ (ստանոկներ): Դազգյահի (ստանոկի) հիմնական մասերը: Կատարող ապարատներ և նրանց կատարելիք գործողությունները (ոպերացիաները):

Առանձին գլանների (վալերի) աշխատանքը): Շրջանառության թիվը (число оборотов): Անհրաժեշտ շարժիչի (դվիգատելի) ուժը: Պաշտպանության հարմարեցումներ: Կատարող ապարատները սարքի գցելը: Դազգյահի (ստանոկի) արտադրողականությունը:

Առանձին ատդելկա անող դազգյահներ (ստանոկներ): Ուրեզի, գելենոկների և կրունկների ֆրեզեր տալը: Ապակյա քերող (стеклильные) դազգյահներ (ստանոկներ): Խողանակներ: Ամեն մի դազգյահի (ստանոկի) ուժը: Շրջանառության թիվը (число оборотов): Պաշտպանման հարմարեցումներ: Ամեն մի դազգյահի (ստանոկի) արտադրողականությունը: Ատդելկայի դազգյահի (ստանոկի) և առանձին դազգյահների (ստանոկների) գաբարիտները:

Մոսկվայի քաղաքային կաշվի միության սիստեմի ատդելկա անող մինյատյուր դազգյահներ (ստանոկներ): Նրանց տարբերությունը և առավելությունները կոշկեղենի ատդելկայի դազգյահների (ստանոկների) նկատմամբ: Մոտոռ-մեքենաներ: Մեքենաների կոնստրուկցիայի պրինցիպներ: Մոտոռ-մեքենաներ խողանակների համար: Համակցական մոտոռ-մեքենաներ: Մոտոռ-մեքենաներ քերելու համար (для взерошивания): Ամեն մի մոտոռ-մեքենայի մեջ յեղած մոտոռի ուժը: Շրջանառու թիվը (число оборотов): Մեքենաների արտադրողականությունը: Նրանց առավելությունները բոլոր մնացած տեսակի ատդելկայի դազգյահների (ստանոկների) նկատմամբ: Փոշի հավաքող պահարանի կառուցվածքը և նրա նշանակումը: Դազգյահների (ստանոկների) և մեքենաների խնամելու կանոնները: Դազգյահները (ստանոկները) խնամելու հարմարեցումներ—յուղաման (մասլյոնկա) պտուտակահան (ոտվյորկա), բաժանվող բանալի (разводной ключ), ձիասարքի բիզ (шерпос седло) և ուշիվալնիկ:

**Թեմա հինգերորդ:** Կոշկեղենի նորոգման տեսակները և բնույթագիրը:

Կոշկեղենի մաշվածքներ, վորոնք ավելի հաճախ են պատահում: Նորոգումների կլասիֆիկացիան—խոշոր, միջակ և փոքր նորոգումներ: Կոշկեղենի տակը վերանորոգման ժամանակ ամրացնելու մեթոդներ: Կոշկեղենը տափակ ռեզինով ամրացնելու համար, սոսինձով կպցնելու մեթոդների առավելությունները: Ամրացնելու համակցական (կոմբինացիոն) մեթոդները: Յելնելով կոշկեղենի վերանորոգման բնույթից և ամրացնելու մեթոդից, վերանորոգման պրոցեսների հետևողականությունը: Ներբանի և

նրա առանձին մասերի մաշվածության և պիտանիության աստիճանը որոշելը։ Կոշկեղենի վերանորոգման ամենապատասխանատու պրոցեսները։ Ատդելկայի պրոցեսների նշանակությունը։ Փայտից կամ կաշվից բարձր կրունկներ պատրաստելու կամ վերանորոգելու դեպքում, նրանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ պահանջը։ Նորոգումների մեքենայացումը։ Թաղիքյա կոշկեղենի նորոգումը։ Թաղիքյա կոշկեղենի վերանորոգման պրոցեսների հետևողականությունը։ Ռեզինե կոշկեղենի նորոգումը։ Կոշկեղենը ժամանակից շուտ մաշվելու պատճառները։ Փոքր վերանորոգումների նշանակությունը, կոշկեղենի գործածման ժամկետը երկարացնելու համար։

**Թեմա վեցերորդ։** Կոշկեղենի մեքենայացված ատդելկայի տեխնոլոգիական պրոցեսները։

Պաղմյոտկայի և նաբոյկայի վերջնական կտրելը (ձեռքի միջոցով)։ Պաղմյոտկա կտրելու կարգը -- զանազան կոշկեղենի մեջ մինչև կոշկեղենի յերեսը յեղած տարածությունը տակի կողմից։ Պաղմյոտկան և նաբոյկան կտրելուց որքան յեզր պետք է թողնել։ Մեքենայի վրա ուրեզը ֆրեզերովկա անելը։ Ֆրեզերները հարմարեցնելը և սրելը։ Կրունկները ապակյա թղթով մաքրելը մեքենայի վրա։ Նաբոյկայի մակերեսը և մեջքը ապակյա թղթելը։ Ուրեզը, կրունկները, մեջքը և ռանտը ներկելը։ Ներկած տեղերի մշակումը մեքենայի խոզանակների վրա, մոմե գլանով (վալիկով) մեքենայի վրա մոմ քսելը (կրունկներին) և ձեռքով (ուրեզներին և մեջքին)։ Ֆումելում ուրեզի դնելը մինչև պարզ ջիղ գոյանալը։ Բաց ռանտի վրա ակը (չարխը) պատացնելը (ռանտով կոշկեղենի վրա)։ Մեքենայի խոզանակների վրա կոշկեղենը մշակելը (փայլացնելը) մինչև մոմի հավասար շերտ գոյանալը (ուրեզի, ռանտի և կրունկների վրա)։ Ատդելկայի դազգյահի (ստանոկի) վրա գործիքների հերթափոխելը։ Ապակյաթղթի հերթափոխումը։ Գործադրվող ապակյաթղթի հերթափոխումը։

Կոշկեղենը կաղապարից հանելը։ Ներսում ցցված մեխերը թեքելը կամ մաքրելը։ Փափուկ կրնկատակ կամ ներսի ստելկա կպցնելը։ Կոշկեղենը սրբելը (պրոտիրկա)։ Ապպրետուրա (ներկ) քսելը։ Ատդելկայի մեքենայացման տնտեսական եֆֆեկտավորումը։

**Թեմա յոթերորդ։** Կոշկեղենի ատդելկայի տեխնիկական պայմանները և գործի տեսակը (сортность) որոշելը։

Ուրեզը ճիշտ ֆրեզերովկայի ենթարկելու տեխնիկական



պայմանները, ֆրեզերովկայի համաչափությունը համաձայն կոշկեղենի լիքության և ֆասոնի ֆրեզերովկայի ընթացքում դուրս պոկելու (выхват) անթույլատրելիությունը։ Զույգի միատեսակությունը (парность) պահպանելը։

Կրունկները ապակով քերելու տեխնիկական պայմանները — ապակիով համաչափ քերելը, քերելու ընթացքում դուրս պոկելու (выхват) անթույլատրելիությունը, նաբոյկայի և կրունկի լիստի համապատասխանումը։ Փայտյա կրունկների ֆրեզերովկայի անհրաժեշտությունը։ Ներկի համապատասխանումը կոշկեղենի գույնին՝ կրունկները, մեջքը, ուրեզը և ռանտը ներկելիս։ Կոշկեղենի կլասիֆիկացիան ըստ որակի։ Ինչպիսի որակ պետք է ունենա առաջին տեսակին դասվող վերանորոգված կոշկեղենը։ Ատդելկայի թերությունները (պառոկները), որոնց հետևանքով վերանորոգված կոշկեղենը պետք է դասվի 2-րդ տեսակին կամ խոտանին։ Կոշկեղենի վերանորոգման գործում խոտան որոշելու կարգը։

2-րդ տեսակի կամ խոտան վերանորոգում կատարելու համար, ատդելկա անող կոշկակարի պատասխանատվության կարգը և աստիճանը։ Խոտանին դասելու ենթակա կոշկեղենը պատվիրատուին հանձնելու անթույլատրելիությունը։ Խոտանին դասած վերանորոգումը վերափոխելու համար արհեստանոց վերադարձնելու կարգը։ Խոտանի բնութագիրը, որը հնարավոր չե ուղղել։ Պատասխանատվության կարգը այն կոշկեղենի համար, որպիսին չի կարող հանձնվել պատվիրատուին, փչացնելու հետևանքով։ Ատդելկա անող կոշկակարի աշխատավարձի կախումը կատարած գործի որակից։

**Թեմա ութերորդ։** Արտադրության կազմակերպումը — անվտանգության տեխնիկա և աշխատանքի պաշտպանություն։

Տնտհաշվարկի իմաստը և նշանակությունը կոշկեղենի վերանորոգման արհեստանոցներում։ Արհեստանոցի արտադրության նախահաշիվը և ծրագիրը որոշելը։ Աշխատավարձի հաշվարկի կարգը։ Աշխատանքի պրոգրեսիվ գործարքային վարձատրությունը կոշկեղենի վերանորոգման արհեստանոցներում։ Արտադրական նորմաները և վարձաչափերը (րասցենկաները) ըստ վերանորոգման առանձին տեսակների և օպերացիաների։ Վերանորոգման տեսակները (сортность) որոշելը։ Խոտան որոշելու և վերանորոգման որակի համար արտելականի նյութական պա-

տասխանատվության կրելու կարգը։ Ըստ տնտհաշվարքի՝ արդյունքների տնտեսումը (կամ վնասը) բաժանելու կարգը։ Ըստ տնտհաշվարքի՝ վոչ տեսակավոր վերանորոգում կատարելու համար տնտեսում ստանալու իրավունքից զրկվելը։ Կոշկեղենի վերանորոգման աշխատանքը ստախանովյան մեթոդով կազմակերպելը։

Աշխատանքի բաժանման նշանակությունը և բարձրորակ աշխատողին լրացուցիչ կամ ոժանդակ գործողություններ կատարելուց ազատելը։ Մի զույգ արտադրելու սխեմայի առավելությունները (աշխատանքի բաժանման ժամանակ) ամբողջ արտադրական պարտիա հավաքելու համեմատ։

Մեքենաների և դազգյահների (ստանոկների) նախազգուշական (պրեդուպրեդիտելնի) վերանորոգման նշանակությունը, մինչ աշխատանքն սկսելը նրանց ամենօրյա ստուգումը և սիստեմատիկաբար ամենօրյա խնամք տանելը։ Կիսաֆաբրիկատների և ոժանդակ նյութերի (ֆուրնիտուրայի) տեսակավորումը կազմակերպելը, նախքան նրանց հասցնելը բանվորական դազգյահին։ Աշխատանք տալը և հավաքելը։ Ինչ է պահանջվում բանվորական դազգյահից (վերստակից)։ Անհատական դազգյահի առավելությունները։ Ոժանդակ նյութերը (ֆուրնիտուրա) և գործիքները դազգյահի վրա ճիշտ դասավորելու նշանակությունը։ Նորմալ աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ գործիքների քանակը և տեսակները (ասորտիմենտը)։ Աշխատանքի տեղի մաքրությունը, ճիշտ լուսավորման և նորմալ ոդափոխման նշանակությունը։ Կաղապարները ճիշտ պահելու և դասավորելու նշանակությունը և նրանց անհրաժեշտ քանակությամբ ունենալը։ Արտադրողականությունը բարձրացնելու աշխատանքի ձեվերը (պրիոմները)։ Աշխատանքի ստախանովյան մեթոդների յուրացնելը և արտելկանի աշխատավարձի բարձրացումը։ Սարքավորումը մաքսիմալ ոգտագործելու նշանակությունը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, հումույթի և նյութերի տնտեսումը, վոչ արտադրական ծախքերի կրճատումը, արտադրության և տեխնիկական նորմավորումը ճիշտ կազմակերպելը։ Վնասարարության հետևանքները վերացնելը։

Սոցիալիստական արտադրության մեջ անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության դերը և նշանակությունը։ Համարդկոոպխորհրդի նախագահության 1938 թ. մարտի 2-ի վորոշումը «Աշխպաշտպանության և տեխնիկայի ան-



վտանգության դրությունը արդկոոպերացիայում» մասին։ Տեխնիկայի անվտանգության կանոնները, մեքենաները և դազգյահները (ստանոկները) սպասարկելու ժամանակ։ Անվտանգության կանոնները, կտրող գործիքի հետ վերաբերվելիս։ Դժբախտ պատահարները կանխելու համար մեքենաների և մեխանիզմների շարժվող մասերը ցանկապատելու կանոնները։ Գործածվող ցանկապատերի տեսակները և տիպերը (типи и виды)։ Սանիտարտեխնիկական և առողջաբանական (գիգիենա) պայմանները ցեխում։ Զգող և ոդափոխման կառուցվածքները։ Դժբախտ պատահարների ժամանակ առաջին ոգնություն ցույց տալու կանոնները։ Հակահրդեհային միջոցառումները։

Տեխնիկայի անվտանգությունը, ատղելկա անելու մեքենաների վրա աշխատելիս։ Գազահանման սարքավորում և ճիշտ գազահանում կատարելու նշանակությունը։

## Գ) ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՄԱՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

**Առաջին թեմայի շուրջը։** «Ընդհանուր տեսություն կոշկեղենի արտադրության մասին»։

Կոշկեղեն և կաղապարներ չափելը ըստ յերկարության և հաստության (լիքության)։ Կոշկեղենի ներբանի և յերեսի առանձին մասերի (ելեմենտների) դերը և նշանակությունը վորոշելը։ Կոշկեղենի ներբանի և յերեսի առանձին մասերի (ելեմենտների) թերությունները (պառոկները) վորոշելը։

**Երկրորդ թեմայի շուրջը։** «Կոշկեղենի ատղելկայի ժամանակ գործածվող նյութեր և ոժանդակ նյութեր (ֆուրնիտուրա)»։

Կաշվի տեսքը և տեսակը բնորոշելը։ Կաշվի, պլաստկոժի և ռափակ ռեզինի թերությունները (պառոկները վորոշելը։ Ատղելկայի նյութերի վորակը վորոշելը՝ ապակյաթղթի, մոմի, ներկի ապրետուրաների և այլն։

**Երրորդ թեմայի շուրջը։** «Կոշկեղենը ատղելկա անողի կոշկակարական գործիք»։

Կոշկեղենը ձեռքի միջոցով ատղելկա անելու և մեքենայացված ատղելկայի ժամանակ, ատղելկա անողին անհրաժեշտ գործիքների քանակը և ասորտիմենտը վորոշելը։

Գործիք սրելը և սարքի գցելը։ Գործիքի վորակը վորոշելը։ Գործիք պահելը։

**Չորրորդ թեմայի շուրջը։** «Ատղելկա անելու դազգյահներ (ստանոկներ) և մեքենաներ»։

Ամեն մի դազգյահի (ստանոկի) տեխնիկական ցուցանիշները որոշելը, դազգյահների (ստանոկների) գործի գցելը և անջատելը։ Բանող գործիքները սարքավորելը (ռեգուլիրովկա անելը)։

**Հինգերորդ թեմայի շուրջը։** «Կոշկեղենի վերանորոգման տեխնիկայի բնութագիրը»։

Կոշկեղենի ներբանի առանձին մասերի մաշվածության և դիտանիսության աստիճանը որոշելը։

**Վեցերորդ թեմայի շուրջը։** «Կոշկեղենի մեքենայացված ատդելկայի տեխնոլոգիական պրոցեսը»։

Ձեռքի և մեքենայացված ատդելկայի պրոցեսների կատարման հետևողականությունը։ Ցրեղերովկա, ապակիով քերելը, փայլեցնելը (պալիրովկա), փուշելով աշխատելը։ Ցրեղերներ և փուշելներ հավաքելը-ջոկելը։ Ցրեղերներ սրելու ձևերը (պրիոմները)։

**Յոթերորդ թեմայի շուրջը։** «Կոշկեղենի ատդելկայի տեխնիկական պայմանները և գործի տեսակը (сортность) որոշելը»։

Կոշկեղենը ատդելկա անելու համար նախապատրաստելու ճշտությունը որոշելը։ Գործի տեսակը որոշելը։

## դ) ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Առաջին թեման պետք է անցնել ինչպես կոշկեղենի հիմնական տեսակների, այնպես էլ տակացուի և յերեսացուի առանձին մասերի փոքրիկ ցուցադրություն կազմակերպելու միջոցով, տեսանելիորեն բացատրելով ամեն մի տեսակ կոշկեղենի տարբերությունը և ամեն մի մասի նշանակությունը։

Կոշկեղեն կարելու տեխնոլոգիական պրոցեսի հետ ծանոթանալու համար օգտավետ կլինի կազմակերպել եքսկուրսիա դեպի կոշկեղենի ֆաբրիկա։

Յերկրորդ թեմայի խնդիր է՝ յուրացնել անհրաժեշտ գործիմացության կիսաֆաբրիկատների և ատդելկայի նյութերի մասին։

Թեման անցնելիս պետք է ցուցադրել ուսումնասիրվող նյութերը և նրանց որակը որոշելու ձևերը (պրիոմները)։

Յերրորդ թեման անցնելիս պետք է ցուցադրել գործիքների ամեն մի տեսակը, ցույց տալ ինչպես դասավորել գործիքները ռացիոնալ ձևով դազգյահի վրա, նրանց խնամելու կարգը և ամեն մի տեսակի գործիքով աշխատելու լավագույն ձևերը (պրիոմները)։



Չորրորդ թեման անցնելու ժամանակ պետք է քննարկել զանազան տեսակի ատդելկայի մեքենաները, ցույց տալ զանազան գործողությունների աշխատանքի ձևերը (պրիոմները), մեքենաների սարքի գցելը (ռեգուլիրովկա անելը). սովորեցնել մեքենաները խնամելու կանոնները, աշխատանքի տեխնիկայի անվտանգությունը և մեքենայի ունակությունը լրիվ օգտագործելը։

Հինգերորդ թեմայի անցնելը պետք է կազմակերպել կոշկեղենի վերանորոգման օրինակելի արհեստանոցում։ Թեման պետք է անցկացնել զրույցի ձևով, ցուցադրելով կոշկեղենի մաշվածության զանազան աստիճանները (հնարավորության դեպքում վերանորոգումից առաջ և հետո)։ Նպատակահարմար է ցուցադրել նորոգման տեխնոլոգիան ըստ պրոցեսների հետևողականության, զուգընթաց ցուցադրելով և բացատրելով ամեն մի պրոցեսի նշանակությունը և աշխատանքի որակի պահանջը։

Վեցերորդ թեման պետք է անցկացնել ատդելկայի աշխատանքը կատարողի տեղի մոտ, մանրամասն քննարկելով ինչպես մեքենայի վրա կատարվող ատդելկայի, նույնպես էլ ձեռքի միջոցով ատդելկայի ամեն մի լրացուցիչ գործողությունները, ցույց տալով ավելի ճիշտ աշխատելու ձևերը (պրիոմները), ամեն մի գործողության որակի պահանջը և վերանորոգման թերությունները, վորոնք կարող են առաջ գալ վատ ատդելկա անելու հետևանքով։

Յոթերորդ թեմայի անցնելը պետք է կազմակերպել կոշկեղենի կատարած ատդելկայի փաստացի թերությունները քննարկելով (վորպեսին պատրաստված է մի վորևէ արհեստանոցում պատվիրատուին հանձնելու համար), այդ թերությունները անալիզի յենթարկելով և թերությունների հիման վրա վորոշել վերանորոգված կոշկեղենի տեսակը (сортность)։

Ութերորդ թեման պետք է անցնել զրույցի ձևով և այդ պետք է ընթանա տվյալ շրջանի առաջավոր արհեստանոցի տնտհաշվարքի և աշխատանքի կազմակերպման անալիզը տալով։ Այդ աշխատանքը կատարելիս հարկավոր է քննարկել տվյալ արհեստանոցի պլանավորման և աշխատանքի կազմակերպման մեջ յեղած բոլոր թերությունները։

Աշխատանքի տեղը լավ կազմակերպելու մասին զրույցելիս պետք է ցուցադրել լավագույն ստախանովականների աշխատանքի օրինակները։

## ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿՈՇԿԵՂԵՆ ԸՆԴՈՒՆՈՂԻ (ՊՐԻՈՄՇՉԻԿԻ) ՀԱՄԱՐ ՏԵԽՄԻՆԻՄՈՒՄԻ ԾՐԱԳԻՐ

## 1. ԳՈՐԾԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ՅԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

### Ա) ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՈՇԿԵՂԵՆ ԸՆԴՈՒՆՈՂԸ (ՊՐԻՈՄՇՉԻԿԸ) ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱ

*1. Կոշկեղենի կառուցվածքը։*

*2. Կոշկեղենը վերանորոգելու համար գործադրվող ամրացման մեթոդները և գործադրվող կիսաֆաբրիկատները։*

*3. Նորոգման թերությունները, ինչպիսի վորակ պետք է ունենա 1-ին տեսակի վերանորոգումը և այն վերանորոգման թերությունները, վորի հետևանքով կոշկեղենը պետք է դասվի 2-րդ տեսակին կամ խոտանին։*

*4. Վերանորոգված կոշկեղենը շուտ գտնելու և պատվիրատույին հանձնելու, նաև լավ խնամելու (ադելկան ու կոշկեղենի մաքրությունը պահպանելու) նկատառումով, կոշկեղենը պահելու և ճիշտ դասավորելու կանոնները։*

*5. Կոշկեղենի վերանորոգման գնացուցակը (պրեյսկուրանտը)։*

*6. Ինչ է պահանջվում ընդունողից, պատվիրատույին վորակով և կուլտուրապես սպասարկելու համար։*

*7. Բողոքի գրքի պահելու կարգը և բողոքները հաշվի առնելը։*

*8. Ընդունման անդորրագրերի լրացնելու կանոնները, դրամարկղի հաշվետվությունը և կոշկեղենի ընդունման ու հանձնման հաշվետվությունը տանելը։*

*9. Աշխատանքի վարձատրության սիստեման և աշխատավարձի հաշվարքը կատարելու կանոնները։*

*10. Տնտհաշվարքի իմաստը և նշանակությունը կոշկեղենի վերանորոգման արհեստանոցում։*

*11. Աշխատանքի ստախանովյան մեթոդները և ընդունող ստախանովականների նվաճումները։*



### Բ) ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿՈՇԿԵՂԵՆԻ ԸՆԴՈՒՆՈՂԸ (ՊՐԻՈՄՇՉԻԿԸ) ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ

*1. Վորոշել վերանորոգման յենթակա կոշկեղենի առանձին մասերի մաշվածությունը և վորոշել անհրաժեշտ ու ավելի եֆեկտավոր վերանորոգման բնութագիրը։*

*2. Վորոշել, վոր նյութը և ամրացման վորպիսի մեթոդն է ավելի նպատակահարմար ամեն մի տեսակ կոշկեղենի համար։*

*3. Բնորոշել վերանորոգված կոշկեղենի տեսակը* (сортность)։

*4. Արագությամբ գտնել գնացուցակում գները և ճիշտ վորոշել վերանորոգման արժեքը։*

*5. Կոշկեղենը ընդունելու և հանձնելու նորմաները գերակատարելու նպատակով, իր աշխատանքը կառուցել պարզ* (четко)։

*6. Իր աշխատանքի տեղը կազմակերպել ստախանովյան ձևով և աշխատել ստախանովյան մեթոդներով։*

## 2. Վերանորոգման կոշկեղեն ընդունողի համար տեխմինիմումի դասընթացների ուսման պլանը

| №№ ը/կ | Առարկաների անվանումը | Ուսման ժամերի թիվը ըստ ամիսների | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | |
| 1 | ԽՍՀՄ Սահմանադրություն (հիմնական օրենք) . . . . . . . | 10 | 10 | — | — | 20 |
| 2 | Ներածություն (տեխնիկական ուսուցման խնդիրները, ստախանովյան շարժումը և արդկոոպերացիայի կազմ. կառուցվածքը . . . . . | 8 | — | — | — | 8 |
| 3 | Մասնագիտական գործ . . . . . | 5 | 15 | 25 | 13 | 58 |
| | Ընդամենը | 23 | 25 | 25 | 13 | 86 |

## 3. Մասնագիտական գործ

### ա) ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

| Թեմայի №-ը | Թեմայի բովանդակությունը | Ժամերի քանակը | | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | | Թեորետիկ ուսուցում | Արտադրական հրահանգավ. | |
| 1 | Ընդհանուր տեսություն կոշկեղենի արտադրության մասին . . . . . . . | 2 | 2 | 4 |
| 2 | Կոշկեղենի վերանորոգման գործում գործադրվող կիսաֆաբրիկատներ . . | 4 | 2 | 6 |
| 3 | Կոշկեղենի վերանորոգում . . . . . | 6 | 2 | 8 |
| 4 | Կոշկեղենի ընդունման և հանձնման տեխնոլոգիական պրոցեսը . . . . . . | 8 | 6 | 14 |
| 5 | Կոշկեղենի վերանորոգման կալկուլյացիա և գնացուցակ (պրեյսկուրանտ) | 6 | — | 6 |
| 6 | Ծառանի ընտրոշումը (բրակյորաժ) և կոշկեղենի վերանորոգման տեսակավորումը . . . . . . . . . . . . . . | 4 | 4 | 8 |
| 7 | Կոշկեղենի ընդունումը և հանձնումը կազմակերպելը, պլանավորում և անվտանգության տեխնիկա . . . . . . | 12 | — | 12 |
| | Ընդամենը | 42 | 16 | 58 |

### բ) ԾՐԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Թեմա առաջին:** Ընդհանուր տեսություն կոշկեղենի արտադրության մասին (տես յերես 4)։

**Թեմա յերկրորդ:** Կոշկեղենի վերանորոգման գործում գործադրվող կիսաֆաբրիկատներ։

Կաշվի ֆիզիկո-մեխանիկական հատկությունը։ Բուսական և խրոմային դաբաղած կաշի։ Կոշկեղենի ներբանի և յերեսի վրա գործադրվող կաշվի տեսակները։ Կոշկեղենի վերանորոգման գործում գործադրվող կաշի փոխարինողներ (զամենիտելներ)։

Տափակ ռեզինի ֆիզիկո-մեխանիկական հատկությունը։ Կաշվի նկատմամբ ունեցած նրա առավելությունները և թերությունները։ Ռեզինե ներբանի ամրացման լավագույն մեթոդները։ Մանոլիտնի (արհեստական) ներբան, ձևավորված ներբան և նրանց վերանորոգման գործում գործադրելու նպատակահարմարության պայմանները։ Պլաստկոժ—նրա առավելությունները և թերությունները տափակ ռեզինի և կաշվի նկատմամբ։ Պլաստկոժի բաղադրությունը։ Պլաստկոժի ամրացման մեթոդները։ Զանազան տեսակի վերանորոգվող կոշկեղենի վրա գործադրվող տափակ ռեզինի և պլաստկոժի հատկությունը։ Ուտիլի և մնացորդների (առխոդների) գործադրումը կոշկեղենի վերանորոգման գործում։ Կաշվի, ռեզինի և պլաստկոժի մնացորդները և նրանց ոգտագործման հնարավորությունները ներբանի զանազան մասերի վրա (նաբոյկաներ, կասյաչոկներ, ռանտ, ռըվոտկաներ և այլն)։ Փափուկ կաշվի մնացորդների (լոսկուտների) ոգտագործումը։ Հին—ուտիլ կոշկեղենի առանձին մասերի ոգտագործումը։ Հասկացողություն նյութերի և կիսաֆաբրիկատների ստանդարտի մասին։

**Թեմա յերրորդ:** Կոշկեղենի նորոգումը։

Ավելի քան հաճախ պատահող կոշկեղենի մաշվածքներ։ Վերանորոգման կլասիֆիկացիա՝ խոշոր, միջակ և փոքր նորոգումներ։ Վերանորոգումների ժամանակ կոշկեղենի ներբանի ամրացման մեթոդները։ Կոշկեղենը տափակ ռեզինով ամրացնելու ժամանակ, սոսինձով կպցնելու մեթոդների առավելությունները։ Ամրացնելու համակցական մեթոդները։

Կոշկեղենի վերանորոգման բնույթից և ամրացման մեթոդներից կախված, վերանորոգման պրոցեսների հետևողականությունը։ Ներբանի և նրա առանձին մասերի մաշվածության և պիտանիության աստիճանը վորոշելը։ Կոշկեղենի վերանորոգման ամենապատասխանատու պրոցեսները։ Ռանտի կամ կռանցի, կիսաֆաբրիկատի և պրոստելկայի նշանակությունը։ Առանձին պրոցեսների նշանակությունը։ Վերանորոգման մեխանիզացիայի հնարավորությունները։ Սոսինձով կպցնելու մեթոդը գործադրելու համար անհրաժեշտ սարքավորում։ Սոսինձով կպցնելու կրակի վտանգությունը։ Կոշկեղենի յերեսը նորոգելու մեթոդները (կարովի կարկատաններ և կպցնովի—անտեսանելի)։ Կոշկեղենի յերեսը ներկելը (թարմացնելը)։

Թաղիքյա կոշկեղենի նորոգումը։ Պրոցեսների հետևողականությունը։ Նորոգումներ սոսինձով կպցնելու մեթոդով։ Ռեզինե կոշկեղենի նորոգումը։ Կոշկեղենը ժամանակից շուտ մաշվելու պատճառները։ Կոշկեղենը ռացիոնալ ոգտագործելու հիմնական կանոնները։ Փոքր վերանորոգման նշանակությունը, կոշկեղենի ոգտագործման ժամկետը յերկարացնելու համար։

**Թեմա չորրորդ:** Կոշկեղենի ընդունման և հանձնման տեխնոլոգիական պրոցեսը։

Կոշկեղենը վերանորոգման ընդունելը և պատվիրատույին հանձնելու աշխատանքների կատարումը։ Կոշկեղենը վերանորոգ-

ման ընդունելու կանոնները: Վոտքի չափը վերցնելը: Անհրաժեշտ նորոգումը և նորոգման տեսակը վորոշելը (խոշոր, միջակ, փոքր): Վերանորոգում կատարելու ժամկետ սահմանելը: Երաշխավորություն (գարանտիա) վերանորոգման վորակի համար: Պատվիրատուի հետ վերաբերվելու կանոնները: Բողոքի գիրք և պատվիրատուի առաջարկների գիրք: Պատվիրատուի բողոքները հաշվի առնելու կարգը: Կոշկեղենը վերանորոգելու համար արհեստանոց հանձնելը և վերանորոգված կոշկեղենը պատվիրատուին հասցնելը: Անդորրագրերի և նարյադի լրացնելու կարգն ու կանոնները: Կոշկեղեն ընդունելու և հանձնելու հաշվառման կոնտրոլ գրքի տանելը: Կատարված վերանորոգման վորակը ստուգելը և նրա համապատասխանումը նորոգման ընդունելու ժամանակ սահմանված տեսքին: Ինչպիսի արտաքին տեսք պետք է ունենա վերանորոգված կոշկեղենը: Վերանորոգված կոշկեղենի պահելու կարգը: Պատվիրատուի ներկայությամբ կոշկեղենի շտապ նորոգում կատարելը: Վերանորոգման տեսակները, վորպիսիք կարող են կատարվել պատվիրատուի ներկայությամբ և այդ վերանորոգումը կատարելու կարգը: Պատվիրատուներին սպասարկելը, վորոնք սպասում են նորոգումը կատարելուն:

**Թեմա հինգերորդ:** Կոշկեղենի վերանորոգման կալկուլյացիան (պրեյսկուրանտը):

Վերանորոգման կալկուլյացիայի կառուցվածքը և նրա հիմնական էլեմենտները: Վերանորոգման կալկուլյացիայի և գնացուցակի (պրեյսկուրանտի) տարբերությունը: Գնացուցակի (պրեյսկուրանտի) կառուցվածքը: Գնացուցակը (պրեյսկուրանտը) մաքսիմում պարզեցնելու անհրաժեշտությունը: Կոմպլեքսային գնացուցակի (պրեյսկուրանտի) առավելությունները և նշանակությունը: Գնացուցակում (պրեյսկուրանտում) խոշոր, միջակ և փոքր նորոգումների անվանումների մեջ մտնող պրոցեսների թիվը: Ամեն մի տեսակի նորոգման բաց թողնման գինը: Նորոգումները գնահատելու կանոնները: Պատվիրատուի նյութով կատարվող վերանորոգումները գնահատելը: Կոշկեղենի վերանորոգման գնացուցակը (պրեյսկուրանտը) մշակելու և հաստատելու կարգը: Գնացուցակի գները խախտելու համար ընդունողի պատասխանատվությունը: Կառավարության դիրեկտիվները բոլոր տեսակի կենցաղային վերանորոգումների բաց թողման գների իջեցման մասին: Կոշկեղենի վերանորոգման բաց թողման գների և ինքնարժեքների իջեցման վրա ներգործող ֆակտորները:



**Թեմա վեցերորդ:** Խոտանի բնորոշումը (բրակյորաժ) և կոշկեղենի վերանորոգման տեսակավորումը:

Կոշկեղենի վերանորոգման գործում խոտան բնորոշելու (բրակյորաժի) սիստեման: Վոչ տեսակավոր և խոտան նորոգում կատարելու համար արտելականի պատասխանատվության կարգը և աստիճանը: Վերանորոգված կոշկեղենը արհեստանոցի վարիչի կամ բրիգադավարի կողմից ընդունելու և համարակալելու կարգը:

Կոշկեղենի վերանորոգման կլասիֆիկացիան ըստ վորակի: Վերանորոգված կոշկեղենը 1-ին տեսակին դասելու պայմանները: Թերությունները, վորոնք բնութագրում են կոշկեղենի 2-րդ տեսակը և խոտանը: Վերանորոգումից ընդունված 2-րդ տեսակի կամ խոտանին դասված կոշկեղենի ամեն մի տեսակի թերությունները բնորոշելը, այդ թերությունների թիվը և բնութագիրը:

Կոշկեղենը, վորը պետք է դասվի խոտանին, պատվիրատուին հանձնելու անթույլատրելիությունը: Խոտանին դասված վերանորոգումը վերափոխելու համար արհեստանոց վերադարձնելու կարգը:

Վերանորոգման թերությունները, վորոնք յենթակա յեն ուղղման անմիջապես ընդունման կետում, մինչև կոշկեղենը պատվիրատուին հանձնելը: Խոտանին դասված կոշկեղենի բնութագիրը, վորը հնարավոր չե ուղղել ընդունման կետում:

Կոշկեղենը փչացնելու համար պատվիրատուի առաջ պատասխանատու լինելու կարգը:

Արհեստանոցից ստացվող վոչ տեսակավոր և խոտան վերանորոգումների հաշվառման կարգը:

**Թեմա յոթերորդ:** Կոշկեղենի ընդունումը և հանձնումը կազմակերպելը, պլանավորումը և անվտանգության տեխնիկա:

Կոշկեղենի նորոգումով բնակչությանը սպասարկելու հիմնական պայմանները՝ վերանորոգման ցանցը բնակչությանը մոտեցնելը, վերանորոգում կատարելու ամենակարճ ժամկետները, գործի բարձր վորակը, վերանորոգման գների մատչելի լինելը: Քաղաքում և գյուղում վերանորոգման ցանցի նորմալ կառուցվածքը: Կոշկեղենի ընդունումը և հանձնումը վերանորոգման արհեստանոցում և արհեստանոցից մեկուսացված ընդունման կետում: Թե առաջին և թե յերկրորդ դեպքում կոշկեղենի ընդունումը և հանձնումը կազմակերպելու դրական և բացասական կողմերը: Ընդունման և հանձնման գործի կազմակերպումը: Ընդունման կետի և արհեստանոցի մեջ կանոնավոր կապ պահպա-

նելու կազմակերպումը։ Ընդունման կետի աշխատանքների ժամանակը։

Ընդունման կետի աշխատանքների ընթացքում ընդհատումների անթույլատրելիությունը։ Ընդունման կետի աշխատանքային օրվա ընթացքում կոշկեղեն ընդունելու և հանձնելու անընդհատ աշխատանքի կազմակերպումը։ Ընդունման կետի արտաքին տեսքի ձևավորումը։ Ընդունման կետի սարքավորումը և կահավորումը։ Սպասող պատվիրատուների համար մաքսիմալ հարմարություններ ստեղծելը։ Պատվիրատուի ներկայությամբ շտապ նորոգումների կազմակերպումը։ Շտապ նորոգումներ կատարող արտելականների աշխատանքի տեղի կազմակերպումը։ Սարքավորման, բանվորական գործիքների և նյութերի դասավորումն արհեստանոցում։ Անհրաժեշտ կաղապարների ասորտիմենտը և քանակը։ Ելնելով տեխնիկայի անվտանգության և աշխ. պաշտպանության կանոնների պահանջից, բանվորական շենքի լուսավորումը և օդափոխումը։ Հակահրդեհային սարքավորումը։ Կրակմարիչներ և նրանցով օգտվելու կանոնները։ Ընդունման կետում կոշկակապերի (շնորկների), կրեմի, կոճակների և այլ կոշկեղենի պատկանելիքների վաճառք կազմակերպելը։

Հասկացողություն արտադրության պլանավորման մասին։ Առանձին ցեխերի պլանավորումը և նրանց աշխատանքների կապակցումը (արտելի պահեստի, արհեստանոցների, ընդունման կետերի)։ Պլանի հիմնական էլեմենտները—սարքավորման մաքսիմալ օգտագործումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, հումույթի և նյութերի ծախսումը։ Արտադրության կազմակերպելը, նորմավորում, բանվորական ուժի հաշվարք, արտադրանքի վորակը, ինքնարժեքի իջեցում։ Տնտհաշվարքի իմաստը և նշանակությունը կոշկեղենի վերանորոգման արհեստանոցներում։ Արհեստանոցի արդֆինպլանը։

Աշխատավարձի հաշվարքի կարգը։ Ընդունողների աշխատանքի վարձատրության ձևը։ Ըստ տնտհաշվարքի արդյունքների տնտեսումը (կամ վնասը) բաժանելու կարգը։ Ըստ տնտհաշվարքի՝ վոչ տեսակավոր վերանորոգում կատարելու համար տնտեսում ստանալու իրավունքից զրկվելը։ Ընդունողի դերը արհեստանոցի պլանների կատարման համար պայքարելու և բնակչությանը կոշկեղենի վերանորոգումով սպասարկելու վորակի համար։ Ընդունողի դերը կազմակերպելու վերանորոգման կոշկեղենը արհեստանոց բերելու համար։



Ընդունողի ազդեցությունը վերանորոգումների վորակի և նորոգումը իր ժամանակին կատարելու վրա։ Ընդունողի հիմնական պարտականությունները՝ պաշտպանել պատվիրատուի շահերը։ Վնասարարության հետևանքները վերացնելը։ Պատվիրատուի նկատմամբ նախազգուշական վերաբերմունք ունենալու անհրաժեշտությունը, վորպես նորոգման պլանները կատարելու միջոցառումներ։

## գ) ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

**Առաջին թեմայի շուրջը։** «Ընդհանուր տեսություն կոշկեղենի արտադրության մասին»։

Կաղապարներ չափելը ըստ յերկարության և հաստության (լիքության)։ Կոշկեղենի ներքանի և յերեսի առանձին էլեմենտների դերը և նշանակությունը վորոշելը։

**Յերկրորդ թեմայի շուրջը։** «Կոշկեղենի նորոգման գործում գործադրվող կիսաֆաբրիկատներ»։

Կաշվի տեսակը և տեսքը բնորոշելը։ Կաշվի, պլաստկոժի և տափակ ռեզինի թերությունները (պառոկները) վորոշելը։

Ուտիլի և մնացորդների (օտխոդների) գործադրումը կոշկեղենը նորոգելու համար։ Ելնելով նորոգման բնույթից, մոնոլիտնի (արհեստական) և ձևավորված (ֆորմովաննի) ներքանի գործադրման նպատակահարմարությունը վորոշելը։

**Յերրորդ թեմայի շուրջը։** «Կոշկեղենի նորոգումը»։

Կոշկեղենի առանձին մասերի մաշվածության և պիտանիության աստիճանը վորոշելը։ Վորոշել անհրաժեշտ նորոգման բնույթը և նրա կատարման միջոցները (սոսինձով կպցնելով, մեխանիկական և այլն)։

**Չորրորդ թեմայի շուրջը։** «Կոշկեղենի ընդունման և հանձնման տեխնոլոգիական պրոցեսը։

Կոշկեղենի ընդունումը վերանորոգման համար։ Վոտքի չափը վերցնելը։ Անհրաժեշտ նորոգումը վորոշելը։ Դրամարկղային գրանցումներ տանելը, նորոգման համար բերած կոշկեղենի հաշվառման կոնտրոլ գրքի տանելը։ Վերանորոգված կոշկեղենի պահելը։

**Հինգերորդ թեմայի շուրջը։** «Կոշկեղենի վերանորոգման կալկուլյացիան և գնացուցակը (պրեյսկուրանտ»։

Գնացուցակի (պրեյսկուրանտի) կառուցվածքը։ Նորոգման արժեքը վորոշելը։ Գնահատումը (տակսիրովկա)։

**Վեցերորդ թեմայի շուրջը:** «Խոտանի բնորոշումը (բրակյորաժ) և կոշկեղենի վերանորոգումը»:

Նորոգման թերությունները (պառոկները) վորոշելը: Վատ նորոգումը վերափոխելը: Արհեստանոցից ստացած վոչ տեսակավոր և խոտանի նորոգումների հաշվառումը:

### Դ) ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Առաջին թեման նպատակահարմար է անցնել ինչպես կոշկեղենի հիմնական տեսակների, այնպես էլ տակացույի և յերեսացույի առանձին մասերի փոքրիկ ցուցադրություն կազմակերպելու միջոցով, տեսանելիորեն բացատրելով ամեն մի տեսակի կոշկեղենի տարբերությունը և ամեն մի առանձին մասի նշանակությունը: Ավելի մանրամասն պետք է քննարկել և կանգ առնել կոշկեղենի այն տեսակների վրա, վորոնք ավելի բնորոշ են տվյալ վայրում և ավելի հաճախ են ընդունվում վերանորոգման համար, քան մյուս տեսակները:

Յերկրորդ թեմայի խնդիրն է՝ ընդհանուր ծանոթություն ունենալ կոշկեղենի վերանորոգման գործում գործադրվող նյութերի հետ: Թեման անցնելիս պետք է ցուցադրել ուսումնասիրվող նյութերը, տեսանելիորեն ցույց տալով նյութերի մեջ պատահող թերությունները (պառոկները):

Յերրորդ թեմայի անցնելը պետք է կազմակերպել որինակելի վերանորոգման արհեստանոցում: Թեման պետք է անցկացնել զրույցի ձևով, ցուցադրելով կոշկեղենի մաշվածության զանազան աստիճանները (հնարավորության դեպքում վերանորոգումից առաջ և հետո):

Ցանկալի յե ցուցադրել պրոցեսների տեխնոլոգիան, ցուցադրման հետ միասին բացատրելով ամեն մի պրոցեսի նշանակությունը և գործի վորակի պահանջը:

Չորրորդ թեման հարկավոր է անցկացնել՝ զրույցը և վարժությունը իրար հերթափոխելու միջոցով: Պարապմունքների առաջին ժամերը պետք է նվիրել հետևյալ զրույցների կազմակերպման՝ ցանցի կառուցման պրինցիպի մասին, պատվիրատուներին վորակով սպասարկելու պարտադիր պայմանների մասին, կոշկեղենի ընդունման և հանձնման կարգի մասին, ընդունման կետի և արհեստանոցի մեջ փոխադարձ ներգործության մասին, վորակի նկատմամբ վերադաս մարմինների դիրեկտիվների, կատարման ժամկետների, վերանորոգման կալկուլյացիայի, պատվիրատույին վերանորոգման վորակի ապահովություն տալու, նրա կատարման ժամկետի մասին և այլն:



Դրանից հետո պետք է անցկացնել վարժություններ որինակելի ընդունման կետում: Վարժությունների ընթացքում անհրաժեշտ է պրակտիկորեն ուսումնասիրել անհրաժեշտ նորոգումը վորոշելու մեթոդները, անդորրագրերի լրացման կարգը, դրամարկղի գրանցումները և նորոգման հաշվառումը տանելը, նորոգումը գնահատելը, պատվիրատույի ներկայությամբ շտապ նորոգումներ կազմակերպելու կանոնները, վերանորոգված կոշկեղենի պահելու կարգը և այլն, վորից հետո անհրաժեշտ է անցկացնել լրացուցիչ կարգով զրույցներ, մանրամասն քննարկելով ընդունման կետի աշխատանքի ճիշտ կազմակերպման ամեն մի ֆակտորը, արտադրական պարապմունքների ընթացքում ստացած պրակտիկ գիտելիքներն ամրացնելու համար:

Հինգերորդ թեման անհրաժեշտ է անցկացնել զրույցի ձևով, տվյալ միության ուժի մեջ գտնվող կոշկեղենի վերանորոգման կալկուլյացիայի անալիզը տալով և սահմանված գնացուցակը վերլուծելով: Անհրաժեշտ է յուրացնել գնացուցակում (պրեյսկուրանտում) նշված ամեն մի անվանումի տակ ընդգրկվող պրոցեսների քանակը: Անհրաժեշտ է ցույց տալ հասարակ և պարզ գնացուցակի (պրեյսկուրանտի) նախագիծը, վորը հաստատված է կոշկեղենի վերանորոգման Համամիութենական արտադրական տեխնիկական խորհրդակցության կողմից (11—15 ապրիլի, 1936 թ.), և բացատրել նրա առավելությունները:

Վեցերորդ թեման հանդիսանում է ամենապատասխանատու թեման: Ուսանողի կողմից այս թեման յուրացնելու աստիճանը, հիմնականում բնորոշելու յե ընդունողի վորակը (կվալիֆիկացիան): Այս թեման պետք է անցնել կազմակերպելով կոշկեղենի վերանորոգման փաստացի թերությունների վերլուծումը, ինչպես ամեն մի առանձին պրոցեսների, այնպես էլ այն կոշկեղենի, վորը պատրաստված է վերանորոգումից հետո պատվիրատույին հանձնելու համար: Նպատակահարմար է զրույցը անցկացնել անմիջապես վերանորոգման արհեստանոցում և ընդունման կետում (այն ժամերին, յերբ նրանք չեն գործում):

Յոթերորդ թեման պետք է անցկացնել զրույցի ձևով ու առաջավոր տնտեհաշվարքի անցած արհեստանոցի աշխատանքի անալիզը տալով և ուսանողների ուշադրությունը գրավելով: Պլանավորման ու աշխատանքի կազմակերպման թերությունների վրա (այդ արհեստանոցի կոնկրետ որինակների հիման վրա):

Ռուսերենից թարգմանեց՝ Բ. ՄԱԼԵՆՑ

Սրբագրիչ՝ ԱՐՏ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գլավլիտի լիազոր № 12971

Պատվեր № 647, Տիրաժ՝ 1000

Հանձնված է արտադրության 20/VI 1939 թ.

Ստորագրված է տպագրելու 22/VII 1939 թ.

---

Կիրովականի Տպարան

ՀՀ Ազգային գրադարան

NL0928105

411
21 AGT 1955
11
28402